27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ #200 (1703)

Azg

Azg armenian daily

Բաքու-Ջեյհան նավթամուղը թաղված չէ, այլ միայն երկրորդ ոլան է մղվում

ԲԱՔՈՒ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի ոեսական նավթընկերության նախագահ Նաթիկ Ալիեւն այսօր հանդես է եկել սենսացիոն հայտարարությամբ, թե Անկարայում նախագահները ոչ մի համաձայնագիր չեն ստորագրի, այլ կընդունեն լոկ արձանագրություն նավթի փոխադրման տրանսկասպյան եւ տրանսկովկասյան նախագծերի ոաշտոնության մասին: Ալիեւը ոարզաբանում է, նախ, շահագրգիռ երկրների հետ բանակցություններն ավարտված չեն, երկրորդ, Ադրբեջանի միջազգային գործառնական ընկերությունը (ԱՄԳԸ) ուղեգծի ընտրության որոշում տակավին չի ընդունել: Երրորդ, ԱՄԳԸ-ն չի ավարտել Ազերի-Չիրաղ-Գյունեշլի ոայմանագրային հանքավայրերի լիամասշտաբ ծրագրի նախապատրաստումը: Կասպիականի ադրբեջանական սեկտորում նավթ արդյունահանող օտարերկրյա ընկերությունները դեռեւս չեն ճշտել, թե որքան ածխաջրածին նրանք կկարողանան այստեղ արդյունահանել, որպեսզի լցնեն «ջեյհանյան խողովակը»: Սակայն Բաքու-Ջեյհան նախագիծը չի ջնջվում, այլ միայն մղվում է հեռին ոլան՝ «անորոշ հեռանկարով»: Փոխարենը երեւան է գալիս Բաքու-Սուփսա տարբերակը, որն ընդունակ է տարեկան ոոմոպամղել 12-15 մլն տոննա նավթ: Նույնն է իրավիճակը նաեւ Բաքու-Նովոռոսիյսկ նավթատարում: Այսոիսով երկու խողովակատարերը կկարողանան ոոմոպամղել 30 մլն տ նավթ:

ԵՈՕՐՅԱ

Խորհրդարանի աշունը

Մրընթաց քայլերով դեպի ինքնալուծարում

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

Քվորումի հանապազօրյա բացակայության հետեւանքով երեկ խորհրդարանն իր հերթական եռօրյայի առաջին նիստում այդպես էլ չկարողացավ ընդունել եւ ոչ մի օրինագիծ: Փոխխոսնակ Ալբերտ Բազեյանի եւ պատգամավոր Արշակ Սադոյանի առաջարկով նիստն ընդհատվեց վաղաժամ: Պատգամավորները նախասրահներում եւ աշխատասենյակներում ճնարկում էին քաղաքական հնարավոր զարգացումները նոր Ազգային ժողովի կանխատեսումներով, իսկ դամոկլյան սրի պես վերջին ոչ որոֆեսիոնալ խորհրդարանի պարանոցին ճոճվում է ընտրական օրենսգիրքը: «Երկրապահ» պատգամավորական խմբի նախաձեռնությամբ հաջորդ երկուշաբթի խորհրդարանը սփոփված է ճնարկել ընտրական օրենսգրքի առկա երեք տարբերակները դրանցից որեւէ մեկն ընդունելով իբրեւ հիմք: Թվաբանական պարզ հաշվարկը ցույց է տալիս, որ իբրեւ հիմք կընդունվի «Երկրապահի» տարբերակը, սակայն նրանք սփոփված կլինեն գնալ փոխզիջումների, օր ըստ ամենայնի, ամենապիտանի

ռույց համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցությունը կդառնա 65-66 ոչ-ոքի:

Օրակարգում կարեւորագույն օրինագծեր էին «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական աոպահովության մասին», «Մամսատուրքի դրույքաչափերի մասին ՀՀ օրենքում յրացումներ եւ փոփոխություններ կատարելու վերաբերյալ», «Վետերանների մասին», «ՀՀ նվազագույն աշխատավարձի», «Փախստականների մասին» օրինագծերի առյուծի մեծամասնությունը ոեսք է վավերացվեր երկրորդ ընթերցմամբ, այսինքն վերջնականապես: Բայց պատգամավորների միտքն ու հոգին օրենքի տառը եւ ոգին այլեւս չեն զբաղեցնում:

Տես էջ 2

ՀԱՄԱՌՈՏ

ՀՀ պաշտպանության նախարարը վերադարձավ Չինաստանից

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ավարտվեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի պաշտոնական այցը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն: Ինչպես հայտնեցին ՊՆ լրատվության եւ քարոզչության վարչությունից, նա հանդիպումներ է ունեցել ՉԺՀ ժողովրդական ներկայացուցիչների համայնական ժողովի մշտական կոմիտեի նախագահ Լի Պենի, ՉԺՀ պաշտպանության նախարար Չի Խաուիթենի, ՉԺՀ սպառազինությունների եւ ռազմական տեխնիկայի գլխավոր վարչության պետ Ցաո Չանչուանի հետ: Հոկտեմբերի 25-ին Պեկինի օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի ընդունելության սրահում Չինաստանի, Ռուսաստանի եւ Հայաստանի պաշտպանության նախարարների կարճատեւ առանձնազրույցից հետո Վ. Սարգսյանը եւ մարշալ Իգոր Սերգեեւը միասին վերադարձել են Մոսկվա: Նույն օրը Վ. Սարգսյանը ժամանել է Երեւան:

Եվրախորհուրդը հետաձգեց ղարաբաղյան հիմնախնդրի լսումները

ԲԱՔՈՒ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ասամբլեայի քաղաքական հանձնաժողովը որոշել է հետաձգել նոյեմբերի 3-ին Ստրասբուրգում կայանալիք ղարաբաղյան հիմնախնդրի լսումները: Ադրբեջանի ԱԳՆ հաղորդման համաձայն, այդպիսի որոշում կայացվել է երկրի արտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովի եւ խորհրդարանական ասամբլեա դիմելուց հետո: Ուղերձում ասվում էր, որ հրավիրված կողմերի հանդիպումը կկայանա միայն այն դեպքում, երբ հանդիպմանը մասնակցեն նաեւ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները: Ղարաբաղյան հիմնախնդրի լսումները Ստրասբուրգում պետք է անցկացվեն մինչեւ այս տարվա վերջը:

Իրան-Հայաստան գազամուղը հետաքրքրում է եվրոպական ընկերություններին

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նախատեսվում է ստեղծել «Իրան-Հայաստան գազամուղ» ծրագրի իրականացման կոնսորցիում: Այդ մասին հայտնեց ՀՀ էներգետիկայի նախարարության զարգացման վարչության պետ Հրաչյա Խաչատրյանը: Ըստ պրն Խաչատրյանի, կոնսորցիումին անդամակցելու իրենց համաձայնությունն են տվել ֆրանսիական «Գազ դե Ֆրանս», գերմանական «Սիմենս» եւ բելգիական «Տրակտեբել» ընկերությունները: Ներկայումս ճնարկվում է համաձայնության հուշագրի վերջնական տեքստի խմբագրումը՝ ստորագրելու համար:

«General Motors»-ը ուսումնասիրում է Հայաստանի շուկան

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունեց համաշխարհային համբավ ունեցող ամերիկյան «General Motors» ընկերության փոխնախագահ Դեյվիդ Հերմանին, «ԵԼԱԶ - GM» կորպորացիայի գլխավոր տնօրեն Գրեգ դե Յոնկերին եւ ԱՊՀ երկրներում ընկերության խորհրդատուներկայացուցիչ Լեւոն Հայրապետյանին:

«General Motors»-ի ներկայացուցիչները առաջին անգամ Հայաստան հզորությունները, շուկան, պահանջարկը եւ արտահանման հնարավորությունները:

Ռոբերտ Քոչարյանի խոսքերով, Հայաստանն իր աղագան եւ տնտեսական զարգացման խնդիրները կապում է ազատ շուկայական հարաբերությունների արմատավորման, ինչպես նաեւ եվրոպական կառույցներում ավելի խորը ինտեգրացման հետ: Այդ իսկ առումով ընկերությունը մեր երկրի օրենսդրության հետ կապված որեւէ խնդիր չի ունենա: Հայաստանի կարեւորագույն առավելություններից է նաեւ երկրի ներքին կայունությունը եւ տնտեսական քաղաքականության մեջ հստակ ուղղվածությունը: Հանրապետության նախագահը շեշտեց, որ Հայաստանը շահագրգռված է համագործակցելու եւ փոխշահավետ բիզնես սկսելու այնպիսի խոշոր ինվեստորի հետ, ինչպիսին «General Motors»-ն է: Նա վստահեցրեց, որ կառավարությունն ըստ ամենայնի կաջակցի ընկերությանը՝ հաստատվելու մեր երկրում, ինչպես նաեւ կոժանդակի համատեղ ծրագրերին:

ԱՊՏԱՎՈՐՈՒ

այցելեցին դեռեւս փետրվար ամսին եւ այդ ժամանակ էլ պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցության հետագա զարգացման մասին: Արտահայտելով Հայաստանում գործնական կապեր հաստատելու իրենց հետաքրքրությունը, ընկերության ներկայացուցիչները նշեցին, որ ավտոմեքենաշինության ոլորտի վերաբերյալ ունեն մի շարք գործնական ծրագրեր, որոնք մտադիր են ճնարկել Հայաստանի ղեկավարության հետ: Ներկայումս ընկերությունը ճիշտ կողմնորոշվելու համար նպատակ ունի մանրամասն ուսումնասիրել եղած

5 բալանոց երկրաշարժ Սպիտակում

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 26-ին, տեղական ժամանակով ժամը 2-անց 21 րոպեին Հայաստանի հյուսիսում տեղի է ունեցել երկրաշարժ: Ըստ ՀՀ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության, էպիկենտրոնում, որը գտնվում է Շիրակամուտ (Նալբանդ) գյուղից 8 կմ արեւելք, ուժգնությունը էպիկենտրոնում կազմել է 5 բալ, Վանաձորում, Ստեփանավանում, Արթիկում՝ 4, Գյումրիում, Իջեւանում՝ 3 բալ:

ՆԱՏՕ-ն մեկ օր է տալիս Բելգրադին Կոսովոյից «ավելցուկային» ուժերը հեռացնելու համար

ԲՐՅՈՒՍԵԼ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ՆԱՏՕ-ն մեկ օր է տալիս Բելգրադին Կոսովոյից բանակի եւ հատուկ ոստիկանության «ավելցուկային» ուժերը հեռացնելու համար: Այս եզրակացությունն է հետեւում այսօր ՆԱՏՕ-ի խորհրդում նատոյական երկու բարձրաստիճան հրամանատարների՝ ռազմական կոմիտեի նախագահ, գեներալ Քլաուս Նաումանի եւ Եվրոպայում ՆԱՏՕ-ի ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, գեներալ Ուեսլի Քլարկի հարավսլավիայի մայրաքաղաք կատարած ուղեւորության արդյունքների ճնարկումից:

Նրանց առաքելության նպատակն էր Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչից կտրականապես պահանջել մինչեւ ՆԱՏՕ-ի կողմից ռմբակոծումների հետաձգված ժամկետի լրանալը (հոկտեմբերի 27-ը) լիովին եւ անհապաղ կատարել Կոսովոյի վերաբերյալ Բելգրադի պայմանավորվածությունները: Ինչպես հայտնել է ՆԱՏՕ-ի մի դիվանագետ, զինվորական հանձնակատարները Միլոշեւիչից խոստում են ստացել նրանց մատնանշած զորամասերն ու ստորաբաժանումները մինչեւ ժամկետի լրանալը Կոսովոյից դուրս բերելու մասին:

ԷԳԵՅԱՆ

Հունաստանի նախագգուշացումը Թուրքիային

ԱԹԵՆՔ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Հունաստանը Թուրքիային կտրականապես զգուշացրել է, որ միայն նրա վրա կընկնի պատասխանատվությունը Էգեյան ծովի վրայով ռազմական ինքնաթիռների թռիչքների հետ կապված որեւէ միջադեպի դեպքում:

«Թուրքիան իր վրա հսկայական պատասխանատվություն է վերցնում եւ պետք է գիտակցի, որ, նկատի առնելով նրա նախահարձակ վարքագիծն Էգեյան ծովում, պատասխանատու կլինի աղագա միջադեպերի համար», կիրակի օրը հայտարարել է Հունաստանի ազգային պաշտպանության նախարար Արոստոլոս Տոխածոպուլոսը Էվրոսի մարզում հունա-թուրքական սահմանում, անդրադառնալով թուրքական ռազմական ինքնաթիռների կողմից վերջին օրերս հունական օդային տարածության զանգվածային խախտումներին:

Հինգշաբթվանից թուրքական օդուժը խախտում էր Հունաստանի եւ Կիպրոսի օդային տարածությունը, փորձելով խանգարել երկու երկրների զինված ուժերի կողմից համատեղ հունական Ռոդոս, Կրետե կղզիների եւ Կիպրոսի միջեւ ընկած շրջանում անցկացվող զորավարժությունները:

Կիրակի օրը առանց նախազգուշացման եւ թռիչքի պարտադիր ոլանի ներկայացման հունական եւ կիպրական քաղաքային գոտիներ էին ներխուժել թուրքական կործանիչների 11 խմբեր մարտական սպառազինությամբ, որոնց հետագա թռիչքը կանխելու համար օդ էին բարձրացել հունական կործանիչներ: Շատ տեղերում այդ ձեռնարկումները վերածվել էին այսպես կոչված կեղծ օդային մարտերի առանց զենքի գործադրման: Նախորդ օրերին թուրքական կործանիչները ընդհանուր հաշվով 180-ից ավելի թռիչքներ էին կատարել դեպի հունական եւ կիպրական թռիչքային գոտիներ:

Հունաստանն այլեւս չի հանդուրժի թուրքական կործանիչների վարքագիծը, որոնք սպառնալիք են ռազմական ինքնաթիռների, ինչպես նաեւ քաղաքացիական ավիացիայի անվտանգության համար», ասել է Տոխածոպուլոսը:

«Թուրքիան պետք է պարզորոշ հասկանա, որ ի տարբերություն այլ երկրների, որտեղ սպառնալիքներն արդյունք են տալիս, դա տեղի չի ունենա Հունաստանի եւ Կիպրոսի պարագայում, հայտարարել է նախարարը: Նրանք ինչքան շուտ հասկանան դա, այնքան լուսավոր կլինի նրանց աղագան եվրամիությունում: Կամ Թուրքիան կսովորի իրեն պահել եվրոպավարի, կամ էլ որոշակիորեն կբացառվի Եվրոպայից»:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՈՊԱԳԻԿ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Եվս մեկ անդամակցական ժողով

Հայաստանի Ոամկավար Ազատական կուսակցության ակումբներից եւս մեկը՝ «Միհրան Տամատյան»-ը, ՀՈԱԿ Հանրապետական վարչության շրջաբերականի կապակցությամբ գումարեց անդամակցական ժողով, որը կայացավ հոկտեմբերի 23-ին: Քննարկման ընթացքում ժողովի մասնակիցները համաձայնության եկան շրջաբերականի այն կետի վերաբերյալ, որ ՀՀ նախագահական ընտրություններից հետո ՀՈԱԿ-ի դերն ու նշանակությունը զգալիորեն մեծացել է, ինչի վառ վկայությունն են ՀՈԱԿ Հանրապետական վարչության մի քանի անդամներին վստահված պատասխանատու պաշտոնները հանրապետության պետական եւ գործադիր իշխանության մարմիններում: Այնուհետեւ «Միհրան Տամատյան»-ի անդամներն անդրադարձան իրենց ակումբի գործունեության աշխատանքային տարբերակներին: Ժողովի արդյունքում որոշվեց, ՀՈԱԿ Հանրապետության վարչության 1998 թ. երկրորդ կիսամյակի աշխատանքային ծրագրից ելնելով, կազմել նոր ծրագիր, ուր մեծ տեղ կհատկացվի նաեւ ՀՈԱԿ մյուս ակումբների հետ փոխհարաբերությունների ու համագործակցության սերտացմանը, Թեքեյան մշակութային միության հետ համատեղ միջոցառումների կազմակերպմանը:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Խորհրդարանի աշունը

Սկիզբը էջ 1

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական պահովության մասին» օրինագիծը ներկայացրեց պաշտպանության փոխնախարար Վահան Շիրխանյանը՝ փաստարկելով, թե կառավարությունը ջանում է ըստ կարելվույն մեղմել զինծառայողների եւ նրանց ընտանիքի անդամների սոցիալական ոչ բարվոք վիճակը: Այսպես՝ 37 հոդվածով սահմանվում են կրթություն ստանալու երաշխիքները՝ ժամկետային զինծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած եւ զոհված անձանց երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ կատարվելու է մրցույթից դուրս՝ պետպատվերով, անվճար: Պարտադիր ժամկետային զինծառայողները պաշտոնաթողությունից հետո մեկ տարի օգտվում են եկամտահարկի վճարման արտոնությունից: Զինծառայողների դրամական բավարարման հետ մեկտեղ վերահաշվարկվելու են համապատասխան պաշտոններ զբաղեցրած եւ պահեստային դարձած զինծառայողների կենսաթոշակները:

Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանը հարկային տեսչության պետ Արտաշես Թումանյանի հետ փորձում էր համոզել անհաղորդ խորհրդարանին՝ կարգավորելու մախային օրենսդրությունը, ուր լուրջ խառնաշփոթ է՝ ժամանակավրեպ եւ իրար հակասող երեք օրենքներով: Ի հետեւանս Հայաստանում տնտեսական հանցագործությունները յուրօրինակ զարգացում են ստանում՝ մեզանում սկսել է տարածվել կեղծ արտահանումը, որի շնորհիվ ճապուկ «ձեռներեցները» բյուջեից գումարներ են գրպանում: Մեր ՀՆԱ 40 տոկոսը կազմող ներմուծումը վերահսկվում է առանձին խմբավորումների կողմից: Բայց Մարկեսի հերոսի պես Աժ-ն իր վերջին աշունն է ապրում՝ հոկտեմբերի վերջն է, եւ պատգամավորական օգտակար գործունեության գործակիցն օրեցօր նվազում է: Սոցիալական, առողջապահության եւ բնապահպանության հարցերի հանձնաժողովի նախագահ Գեղամ Ղարիբջանյանը նշեց, որ վեճերները բողոքի են եկել օրենսդիրների մոտ՝ սպառնալով հոկտեմբերի 29-ին հանրահավաքի ելնել, բայց Աժ-ն անզոր է ոչ միայն կառավարությունից լրավճարներ ստանալու իրենց կյանքի մայրամուտն ապրող վետերանների համար, այլեւ պարզ քվեարկություն կազմակերպելու:

«Ասակել արտաքին (հատկապես տարածաշրջանային) քաղաքականության հստակ հայեցակարգ եւ առանց որեւէ նախապայմանի վերսկսել ԼՂՀ խաղաղ կարգավորման բանակցային գործընթացն ու բացառել ԼՂՀ քաղաքական կարգավիճակի շուրջ տեսակետներ ներկայացնելը նախքան բանակցությունների վերսկսումը», հաստատակամ առաջարկեց իշխանությանը Դավիթ Շահնազարյանը՝ իր հիմնադրած «21-րդ դար» ժողովրդավարական ազգային կուսակցության հայտարարությամբ: Պատգամավոր Շահնազարյանը նորաստեղծ իր կուսակցության առաջին ասուլիսը սկսեց արտաքին քաղաքականությունից՝ ի մասնավորի ԼՂՀ հիմնահարցից հավատարիմ քաղաքական իր նախասիրությանը: Բաքվում վարչապետ Արմեն Դարբինյանի կողմից ՏՐԱՍԵԿԱ-ի հայտարարագրի ստորագրումը նա գնահատեց իբրեւ 1992 թ. ԳԽ որոշման խախտում, որի պատճառը ոչ թե նոպատակալաց քաղաքական դիրքորոշումն է, այլ «հանցավոր անփութությունը»: Դ. Շահնազարյանը ձիով քայլ կատարեց հիշատակելով վարչապետի եւ արտգործնախարարի իրարամերժ հայտարարությունները որպես նոր իշխանության արտաքին քաղաքականության եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետության խաղաղ կարգավորման հստակ հայեցակարգի բացակայության ուղղակի վկայություն: Նա վկայակոչեց ՄԱԿ-ի այն չորս բանաձեւերը, ուր ԼՂՀ-ն ամրագրված է իբրեւ Ադրբեջանի բաղկացուցիչ մաս: Դրանք են. ա) Քելբաջարի գործողությունից հետո ապրիլի 22-ին ընդունված 822 բանաձեւը, բ) Ադդամի, գ) Զանգելանի եւ դ) Հորադիզի գործողություններից հետո ընդունված բանաձեւերը: Միաժամանակ Դավիթ Շահնազարյանը դիվանագիտորեն ընդգծեց, որ ՏՐՍԵԿԱ-ի Բաքվի հայտարարագիրը իրոք չի դրվելու ԼՂՀ հանրապետության կարգավորման հիմքում եւ համաձայնեց Ռոբերտ Քոչարյանի այն դիտողությանը, որ այս համաձայնագրի ստորագրումը հաղթահարելի եւ ուղղելի քայլ է: Անդրադառնալով արտգործնախարար Վարդան Օսկանյանի ոչ կոնվենցիոնալ լուծումներ գտնելու առաջարկին, նա ընդգծեց, որ նման լուծումը ողջունելի է, բայց դրա մասին հրապարակավ խոսելը՝ սխալ: Լիսաբոնում արդեն Հայաստանը գործել է վճռորոշ սխալ՝ փոխելով բանակցային իր հայեցակարգը, քաղաքական կարգավիճակը պետք է ծնվի բանակցություններ-

«Ավելի լավ է ունենալ ոչ ճիշտ հայեցակարգ, քան չունենալ»

«21-րդ դար» կուսակցության առաջին քաղաքական հայտը

ի արդյունքում, եւ ոչ թե կանխորոշվի:

Մեր տարածաշրջանում կատարվում են սկզբունքային փոփոխություններ նավթային գործոնը թուլանում է, եւ Անդրկովկասն այլեւս ԱՄՆ-ի եւ Եվրոպայի համար նավթամուղին կից շրջակայք չէ: Ուստի Ադրբեջանում վերընտրված նախագահ Ալիեւն իր հայացքն ուղղելու է դեպի Ռուսաստան եւ ԱՊՀ: Հայաստանն այլընտրանք չունի արտաքին քաղաքական իր հայեցակարգը մշակելու: Արտաքին քաղաքական այս փաստերի արձանագրումից հետո Դավիթ Շահնազարյանն անցում կատարեց նախագահ Ռոբերտ Քոչարյանի ՄԱԿ-ի ելույթին՝ որակելով այն իբրեւ տղայական: «Ազգի» հարցին՝ ի պատասխան նա մասնավորեց. «Եթե նախագահը ՄԱԿ-ում ժամանակ չի գտնում հանդիպելու Մադլեն Օլբրայթի հետ, ապա եզրակացությունը դուք կատարեք: Այդ դատողությունները՝ մեկնե՞լ, թե՞ չմեկնել, տղայություն չէ՞: ՄԱԿ-ում սպառնալ, թե ոչնչացնող զենք կարող ենք ստեղծել, երբ իրականում չենք կարող՝ տղայություն չէ՞»: Ցեղասպանության հարցի բարձրացումը ելույթում եւս համարվեց սխալ, քանզի մենք արդեն ունենք մեկ գերխնդիր եւ առանց ուժերը հաշվարկելու, բարձրացնել երկրորդ գերխնդիրը, վտանգավոր քայլ է, կամ Դավիթ Շահնազարյանի ձեւակերպմամբ, «սփյուռքի եւ Հայաստանի զգացմունքների վրա խաղ»: «21 դարը» խաղում է կարմիր խաղաթղթերով:

Ն. Դ.

ԸՆՏՐԱԿԱՆ

Պետք չէ ժողովրդավարությունը ներկայացնել որպես սեփականություն

«Կարծում եմ, որ ե՛ւ ՀՅԴ-ն, ե՛ւ ՀԺԿ-ն ընտրահանձնաժողովներում պետք է ավելի պակաս տեղ չունենան, քան «Շամիրամը» կամ ՀՀՇ-ն», ասաց ՀՅԴ պատգամավոր Ռուբեն Հակոբյանը՝ «Ազգի» համար մեկնաբանելով իրենց կուսակցության դիրքորոշումը Աժ-ում շրջանառության մեջ գտնվող ընտրական օրենսգրքերի տարբերակների վերաբերյալ: Նոյեմբերի 2-ին «երկրապահ» խմբի նախաձեռնությամբ կգումարվի արտահերթ նիստ, որի օրակարգում ընտրական երեք օրենսգրքերն են՝ միացյալ կուսակցությունների, ԻՄ-ի եւ «երկրապահի» տարբերակները: Ռուբեն Հակոբյանը նշեց. «Հանձնաժողովների ձեւավորման կարգից բացի, ՀՅԴ-ն իր համաձայնությունը տվել է ընտրական օրենսգրքի միասնական տարբերակին: Բայց հանձնաժողովների ձեւավորման կարգի վերաբերյալ մենք ներկայացրել ենք մեր վերապահումներն ու առաջարկությունները, այժմ դրանք քննարկման ընթացքում են: «Երկրապահի» նախագծի մոտեցումները մեզ համար անընդունելի են: Բայց կուզենայի շեշտել, որ իզուր է էդ. եգորյանն իրեն վերագրում այս տարբերակը, որը մի քանի կուսակցությունների աշխատանքի արդյունք է, եւ պետք չէ եղածը ներկայացնել որպես սեփական՝ չմոռանալով, որ դա նաեւ վանում է շատերին: Նկատի ունենալով այս խորհրդարանի ձեւավորման սկզբունքը եւ քաղաքական ուժերի իրական դասավորությունը՝ մենք պնդում ենք, որ ընտրական բոլոր աստիճանի հանձնաժողովները պետք է կազմավորվեն՝ ելնելով քաղաքական ուժերի ներկայիս հարաբերակցությունից: Հիշեցնեմ նաեւ, որ ժողովրդավարության այն դրույթները, որոնք այսօր ուզում է պաշտպանել խորհրդարանի նոր ընդդիմությունը՝ հայտարարելով, թե իրեն ճնշում են, 5-6 տարի առաջ Գերագույն խորհրդում պաշտպանում էր ՀՅԴ խմբակցությունը, եւ դա իրոք դաժանորեն ճնշվում էր այն ժամանակ իշխանություն, այսօր ընդդիմություն դարձած քաղաքական ուժի կողմից»:

Ն. Ա.

Չորս ընտրատարածքներից երեքում ընտրված պատգամավորները հայտնի են

ԵՐԵՎԱՆ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 25-ին՝ կիրակի օրը Աժ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ էին նշանակված Երեւանի թիվ 40, Արարատի թիվ 111, Գյումրիի թիվ 54 եւ 55 ընտրատարածքներում: ԿԸՀ քարտուղար Արմենուհի Զոհրաբյանը հաղորդեց ընտրությունների հետեւյալ արդյունքները. թիվ 40 ընտրատարածքում ընտրողների ամենաշատ ձայներ հավաքել եւ նախնական արդյունքներով պատգամավոր է ընտրվել թեկնածու Արայիկ Մուրադյանը, թիվ 111 ընտրատարածքում՝ Լեռնիկ Ալեքսանյանը, թ. 54-ում՝ Մարտին Սուքիասյանը: Թիվ 55 ընտրատարածքի տեղամասերից մեկում ընտրությունները անցել են օրենքի խախտումներով, ուստի այդ տեղամասի առնչությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովը կընդունի լրացուցիչ որոշում:

Հայրենական արտադրության զարգացման դեղատոմսը

Ըստ Խաչատուր Սուքիասյանի

«Հայաստանում մինչեւ օրս չկան ներմուծվող ապրանքներին փոխարինող եւ արտահանումը խթանող արտադրական ներուժի հանգողնանի վերլուծությունն ու գնահատականը: Անհրաժեշտ է ստեղծել մի հանձնաժողով, վարչություն կամ, եթե պետք է, նույնիսկ նախարարություն, որը կատարի այդ կարեւոր աշխատանքը: Միայն այդ ճանապարհով հնարավոր կլինի քայլ առ քայլ զարգացնել ներքին շուկայում արտասահմանյան ապրանքներին մրցունակ եւ դեպի արտաքին շուկա ուղղված հայրենական արտադրությունը», «Ազգի» հետ զրույցում ասաց ՍԻԼ կոնցեռնի նախագահ Խաչատուր Սուքիասյանը: Ըստ նրա, այդ վերլուծությունն ու գնահատականը կարող են ի վերջո կողմնորոշիչ լինել նրանց համար, ովքեր պատրաստ են «դնել» արտադրություն, բայց դեռեւս չեն կողմնորոշվել շուկայում: Եվ եթե առաջիկայում կառավարական մակարդակով դա չկատարվի, ապա իրենց կառույցը պատրաստ է իր վրա վերցնել այդ առաքելությունը: Պրն Սուքիասյանն իր դատողությունները մանրամասնեց վերջերս շուկա նետած, բայց արդեն ճանաչում գտած «Մազա» մանգոյի հյութի օրինակով: Չարբախի նախկին «Զովք» ջրեր եւ լիմոնադ արտադրող, այժմ՝ հայ-արաբական համատեղ այս ձեռնարկության ստեղծման նախապատմության հիմքում ընկած է հենց այդ վերլուծությունը, որի արդյունքում պարզվեց, որ Հայաստան են ներմուծվում հսկայական քանակությամբ հյութեր, որոնց մոտ 70 տոկոսը ջուր է: Այսինքն ծախսվում են ավելորդ գումարներ, մինչդեռ հնարավոր է տեղում Հայաստանի լավորակ ջրով եւ տեղական հումքով հիմնել նմանատիպ արտադրություններ: Վերոհիշյալ ձեռնարկության արտադրանքի իրացումն, ընդամենը կես ամսվա գործունեության ընթացքում, արդեն գերազանցում է սպասվածի 40 տոկոսը. կոնցեռնի սպասարկման օբյեկտներում հայկական մանգոյի հյութը գերադասում են արտասահմանյան հյութերից: Խ. Սուքիասյանի կարծիքով, նման օրինակներ, ցանկության դեպքում, կարող են լինել արդյունաբերության այլ ոլորտներում եւ հատկապես՝ թեթեւ ու սննդի:

Գ. ՄՈՒՐՈՅԱՆ

Պիցցա ճաշակելը եւս նորաձեւություն է

Սպասարկումը, որը տուրիզմի զարգացման կամ ընդհանրապես որեւէ երկրի կենցաղը բնութագրող հիմնական բաղադրիչներից մեկն է, այսօր Հայաստանում հատուկենտ զարգացող ոլորտներից մեկն է: Երբեմնի «վեստրոկներ» կոչված օբյեկտներին փոխարինել են քաղաքակիրթ աշխարհում վաղուց ընդունված հաստատությունները՝ ռեստորաններ, բառեր, սրճարաններ, որոնք մտել են մեր կենցաղ եւ դարձել նորաձեւության հիմնական չափանիշներից մեկը: Այսպես, օրինակ, իտալական ազգային կերակրատեսակ համարվող պիցցան, որի մասին Հայաստանում գիտեին միայն հայրենադարձները կամ արտասահմանում եղած հատուկենտ «երջանիկները», այսօր մտել է մեր կերակրատեսակների ցանկը, իսկ պիցցա ճաշակելը դարձել է նորաձեւ այնպես, ինչպես բջջային հեռախոսով խոսելը կամ արտասահմանյան մեքենա վարելը: Երեւանում հիմնված «Դոկա-պիցցա»-ին երկու տարվա ընթացքում արագորեն հաջորդեցին «Պիցցա դի Ռոմա»-ները, ապա «Պիցցա հաբ»-ը, իսկ վերջերս նաեւ «Պիցցա Պեպինո»-ն, եւ այսօր



ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

միայն մայրաքաղաքում այդ հաստատությունների թիվը հասնում է մեկ տասնյակի: Շաբաթ օրը Կենտրոնի բնակչությանը հայտնի նախկին «Անուշ» գաստրոնոմում բացվեց Երեւանում արդեն չորրորդ «Պիցցա դի Ռոմա»-ն, որի տնօրեն Գեւորգ Սաֆարյանը հայտնեց, որ դրան կհաջորդեն Գյումրիում, Վանաձորում, ինչպես նաեւ մայրաքաղաքի ծայրամասերում նախատեսված «դի Ռոմա»-ները: Վերջիններիս ցանցի ընդլայնման նոպատակը ՍԻԼ կոնցեռնի կողմից ոչ այնքան օահութաբեր բիզնեսի զարգացումն է, որքան միջին խավի համար նախատեսված սպասարկման ոլորտի օբյեկտների ինստիտուտի կայացումը:

Մ. Գ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հինգշաբթի եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
Ցղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՀԺԿ-ն արհեստածին չէ

Կարեն Դեմիրճյանի այս ինդումը եւ ընդհանրապես ամբողջ ելույթը կառուցված էր լայն հասարակությանը հինգ ամիս առաջ հիմնած իր կուսակցության հանելուկները բացահայտելու սկզբունքի վրա: Վիճակագրական տվյալներով՝ հինգ ամսում ՀԺԿ-ն ստեղծել է 600 հիմնական կուսկազմակերպություն՝ 20 անդամից բաղկացած վարչության ջանքերով: Առավել գործուն է Արարատյան դաշտավայրը եւ մայրաքաղաք Երեւանը, զգուշավոր՝ Շիրակը, Սիսիանը եւ Աշտարակը: Վարչությունն արդեն ձեւավորել է վեց հանձնախումբ, որոնք պայմանավորում են կուսակցության գործունեության հիմնական ոլորտները. ա) գաղափարական քարոզչական, բ) սոցիալ-տնտեսական, գ) ներկուսակցական, դ) միջկուսակցական եւ արտաքին կապերի, ե) օրենսդիր աշխատանքի եւ զ) երիտասարդության, կանանց ու սոցիալական տարբեր խավերի հետ տարվող աշխատանքների:

«ՀԺԿ-ն կուսակցություն է, որի նպատակն է ժողովրդավարության, սոցիալական արդարության, քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության կերտումը: Մենք մոտ ենք ժողովրդական կամ դեմոկրատական սոցիալիզմի գաղափարներին: ՀԺԿ-ն ձախ կենտրոնամետ կուսակցություն է», այսպիսին է Կարեն Դեմիրճյանի բնորոշմամբ իր կուսակցության տեսական բանաձեւը: Առաջիկա գերխնդիրները, որոնց ուղղվելու էր նորընծա ՀԺԿ ներուժը, ամենից առաջ կուսակցական կառույցների համալրման տիրույթն է: Ծրագրվում է սկզբնական կազմակերպությունների թիվը հասցնել 1600-ի: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները կուսակցությունների տարածքային կազմակերպությունների համաժողովների ամիսներն են, որոնց եզրափակումը կլինի 99 թ. հունվար-փետրվարին գումարվելիք հիմնադիր համագումարը:

Կարեն Դեմիրճյանը տեսական լռությունից հետո չխուսափեց գնահատականներից՝ վերլուծելով հանրաքեությունը սոցիալ-տնտեսական եւ ներքաղաքական իրավիճակը: Առաջինը տնտեսությունն էր, ակներեւ է, որ խոշոր արդյունաբերական ձեռնարկության տնօրեն Կարեն Դեմիրճյանը կուսակցական առաջնորդ Դեմիրճյանի հայացքներում գերակայում է: Ելույթի մեկնակետը Հայաստանում 7-ամյա ճգնաժամի ախտորոշումն էր՝ տնտեսական, սոցիալական եւ քաղաքական ոլորտներում: Կարեն Դեմիրճյանը փաստեց, որ սոցիալ-տնտեսական ճգնաժամի զուգադրումը քաղաքականի հետ կհանգեցնի համընդհանուր ճգնաժամի, որը կարող է կործանարար հետեւանքներ ունենալ մեր հանրաքեության եւ ժողովրդի համար: Ըստ այդմ, ՀԺԿ-ի նպատակն է «սատարել, պայքարել, որ հանրաքեությունը որ, ժամ առաջ դուրս գա սոցիալ-տնտեսական ճգնաժամից, որպեսզի բացառվեն քաղաքական ճգնաժամերը: Մեզ վրա պատասխանատվություն վերցնենք երկիրը ճգնաժամից դուրս բերելու», ասաց Կ. Դեմիրճյանը: Նշենք, որ հայաստանյան քաղաքական դաշտում իշխանության պատասխանատվությունը սանձելու պատրաստակամություն առայժմ փորձ է անում դրսեւորելու «Երկրապահը», որի կուսակցաստեղծման գործընթացը եւս կատարում է իր առաջին քայլերը: Մնացյալ կուսակցություններն ու քաղաքական կազմակերպությունները՝ ներառյալ եւ ավանդական՝ 100-ամյակը հատած, առայժմ կողմնորոշվում են: Իսկ երկու նոր ձեւավորվող քաղաքական ուժերը՝ ՀԺԿ-ն եւ «Երկրապահը», հստակակամ են, ինչն անուղղակի վկայություն է, որ նորանկախ հայոց պետականության շարժիչ ուժը լինելու են նոր կուսակցությունները:

Հայաստանյան տնտեսական իրականության մեջ Կարեն Դեմիրճյանն արժեւորեց սեփականաշնորհման ու

ՀԱՄԱԺՈՂՈՎ

«Մեր ջուրն ուրիշ ջրեն չէ»

ՀԺԿ-ն պատրաստվում է ԱԺ ընտրությունների

«Մենք ոչ թե բողոքող եւ ժխտող պետք է լինենք, այլ կառուցողական այլընտրանքներ առաջարկող», հավաստեց Կարեն Դեմիրճյանը Հայաստանի ժողովրդական կուսակցության առաջին կազմակերպական խորհրդաժողովում: ՀԺԿ-ի երկունքը պարուրված էր լռությամբ, ուստի համաժողովը յուրօրինակ բացահայտումն էր նորաստեղծ կուսակցության ներուժի առաստելազերծում: Կիրակի կինոյի տան մեծ դահլիճում եւ նախասրահներում եռուզեռ էր: ՀԺԿ տարածքային կազմակերպությունների պատասխանատուների միջին տարիքը 40-45 էր. կեցվածքը պաշտոնյայի: Ակնհայտ է, որ այս կուսակցության հիմքը կազմում են ներկա միջին պաշտոնյաները եւ նախկին բարձրաստիճան գործիչները, որոնք նոմենկլատուրային աշխատանքի դռդոց են անցել, ուստի ի տարբերություն, դիցուք կոմկուսի կամ ԱԺՄ-ի, այս դահլիճը հավասարակշիռ էր, իր արտահայտություններում զուսպ եւ ոչ հեղափոխական: Համաժողովը տեւեց բավական կարճ. Կարեն Դեմիրճյանի ելույթից հետո տասն մի քանի տարածքային կազմակերպությունների ղեկավարներ ներկայացրին իրենց դիտարկումները:

ներդրումային քաղաքականությունը եւ ազատական-տուկայական տնտեսակարգը. «Ոչ մեկը դեմ չէ սեփականաշնորհմանը, այս հասկացությունը պետք է բոլորի ուղեղում մտնի, բայց սեփականաշնորհումն ինքնանպատակ չէ, այլ միտված է տնտեսական արդյունաբերության բարձրացմանը»: «Մեր ջուրն ուրիշ ջրեն չէ», Սայաթ-Նովայի մոտիվներին հակակշիռ տեսնեց ՀԺԿ ղեկավարը: Այսինքն՝ «ՀԺԿ-ն կդայքարի տուկայական տնտեսության եւ հատկապես պետական նոր տնտեսական քաղաքականության համար»: Կ. Դեմիրճյանը համոզված է, որ մինչեւ տուկայական հարաբերությունների լիակատար անցումը, որը չափազանց կարեւոր է Հայաստանի համար, պետությունը պետք է կարգավորիչ դեր ստանձնի տնտեսության մեջ: Միայն տուկայական տնտեսակարգի կառուցումից հետո տնտեսությունը կդառնա ինքնակառավարվող, իսկ այժմ պետության մեկուսացումը տնտեսության կարգավորումից հանգեցնում է միայն աղեցալի հետեւանքների:

Երկխոսությունն իբրեւ քաղաքական նոր հայեցակարգ

«Հայաստանում չի կարելի եւ հնարավոր չէ ոչ մի քայլ ձեռնարկել եւ մեզանում ոչ մի հիմնախնդիր չի լուծվի, եթե չլինի ժողովրդի աջակցություն: Մենք այն կուսակցությունը պետք է լինենք, որը պետության հետ կաշխատի երկխոսության ճանապարհով: Եվ լավ գիտենք, եթե ժողովուրդը հավատաց, կգնա սարեր տուն կտա, եթե չհավատաց, ամենածիծաղելին էլ կվերաբերվի, կասի՝ գնանք, գործ չունենք, սա մերը չէ: Կառավարությունը պետք է մշակի ժողովրդավարական քաղաքականություն, որը հասկացվում եւ աջակցվում է ժողովրդի կողմից»: Երկխոսության եւ կոնսենսուսի քաղաքական սկզբունքները Կարեն Դեմիրճյանը համարեց գերադաս: Մեր տեւական ճգնաժամի հիմնական պատճառը ժողովրդի օտարումն է իշխանությունից կամ, ժամանակակից ձեւակերպմամբ, «ժողովրդին խաղից դուրս հանելը»: «Ժողովուրդը, որն իշխանության աղբյուրն է, եւ ընտրությունների միջոցով պատվիրակում է իր իշխանությունը պատգամավորներին, այժմ չի մասնակցում ներկա քաղաքականության ոչ մշակմանը, ոչ էլ իրականացմանը: Անցած տարիների ընթացքում, ընդգծեց Կ. Դեմիրճյանը, չմշակվեց պետության անցումային մոդելը՝ տնտեսական զարգացման, քաղաքական կառուցվածքի եւ սոցիալական իրադրության: Արդյունքում դեգերում ենք՝ կուրորեն կրկնօրինակելով մերթ այս, մերթ այն երկրների փորձը»: Հատուկ կարեւորելով ներդրումային քաղաքականությունը, ՀԺԿ ղեկավարը շեշտեց, որ չպետք է լինեն սիրված եւ չսիրված, վստահելի եւ անվստահելի ներդնողներ: Անձնավորված մոտեցումը խոչընդոտում է Հայաստանի զարգացմանը:

Քաղաքական խորհրդի առաքելությունը Կարեն Դեմիրճյանը թերահավատ գնահատեց, քանզի նախագահին կից լինելու հանգամանքը կարող է հանգեցնել հակասական իրադրության: Քիչ անդամները որեւէ որոշում են ընդունում, եւ նախագահը ստիպված է հրաժարակել՝ համաձայն չլինելով (եթե նկատի առնենք նախորդ իշխանությունների քաղաքական ուղեգծին տրվող գնահատականի բանավեճը, ապա կարող ենք արձանագրել, որ Կ. Դեմիրճյանը հեռու չէ իրականությունից): Ուստի, ՀԺԿ-ն չի պատրաստվում անդամակցել ՔԽ-ին՝ չբացառելով կուսակցական խորհրդաստվությունը: Սահմանադրական փոփոխությունների գաղափարը նա ողջունեց, բայց դարձյալ փաստարկեց, որ այդ հանձնաժողովը չպետք է լինի նախագահին կից, այլ օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների համատեղ ձեռնարկում:

Ազ ընտրությունները Կարեն Դեմիրճյանը համարեց միակ հնարավոր ելքը ճգնաժամի հաղթահարման: ՀԺԿ-ն համաձայն է էդ. Եգորյանի եւ նրան միացած կուսակցությունների մշակած ընտրական օրենսգրքի նախագծին: «Սա միակ հնարավորությունն է, որ Հայաստանում իսկապես ժողովրդավարական ճանապարհով ընտրվի Ազ, որը հիմքերի հիմքն է պետականության: Նախագահը, կառավարությունը, չնայած ուժեղ են, բայց օրենքի առջեւ երկրորդական են: Եթե ուզում ենք քաղաքացիական հասարակություն ստեղծել, հարեւն օրենքների հասարակություն պիտի ստեղծենք, ուր հարաբերությունները կարգավորվում են օրենքներով եւ ոչ թե մարդկանց քմահաճույքով»: Եվ կարծես ի պատասխան իր դժգոհող կուսակիցների, Կ. Դեմիրճյանը եզրափակեց. «Ոչ մի ներում չի կարող լինել այն մարդկանց, որոնք կխաթարեն ազատ, արդար ընտրությունները: Այս անգամ մենք մինչեւ վերջ պետք է գնանք (բուռն ծափեր): Այն անգամ չգնացինք ծանր քայլերի ոչ թե նրա համար, որ չէինք ուզում, այլ հանրաքեությունը չխայտառակելու համար: Մենք մեր տանը պետք է հարցերը լուծենք»:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լրացավ ՀԴԿ 7-րդ տարեդարձը

Հոկտեմբերի 25-ին լրացավ Հայաստանի դեմոկրատական կուսակցության պատմական գրացման 7-րդ տարեդարձը: Այդ առթիվ կուսակցության գրասենյակում կիրակի օրը կայացած բազմամարդ հանդիսության ժամանակ ՀԴԿ ղեկավարության անդամ, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանն ընդգծեց, որ ՀԴԿ հիմնադիր խումբը, անջատվելով այն ժամանակվա կոմկուսից եւ ձեռնամուխ լինելով նոր կուսակցության ստեղծմանը, կատարեց միանգամայն օրինաչափ քայլ, քանզի նախկին կոմկուսի շարքերում էլ գաղափարական այլ արժեքների՝ սոցիալ-դեմոկրատական կողմնորոշումների կրողն ու արտահայտիչն էր եւ դրանով իսկ ընդդիմադիր էր կուսակցական մենաշնորհությանն ու պրակտիկային: Ամբողջատիրական համակարգի պայմաններում կոմկուսի այս ոչ միատարությունն ու գաղափարական շերտավորումը միշտ ուղեկցել է խորհրդային իրականությանը, ուստի հենց հնարավորություններ առաջացան այդ շերտերն անջատվեցին եւ ձեռնամուխ եղան իրենց համոզմունքներից ու խղճից բխող քաղաքական գործունեության:

ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը, շարունակելով բանաստեղծուհու միտքը, ընդգծեց, որ կուսակցությունն անցած 7 տարիներին մեծապես աճել է եւ գաղափարապես ամրապնդվել, ունի իր կառույցները բոլոր մարզերում եւ բազմաթիվ բնակավայրերում, փաստորեն իրոք վերածվել է հանրապետական կուսակցության, որի անդամների ճնշող մեծամասնությունը, ի տարբերություն ճանապարհի սկզբի, նախկինում կոմկուսի կամ որեւէ այլ կուսակցության անդամ չի եղել:

Անդրադառնալով ներկա իշխանությունների հետ ՀԴԿ համագործակցության, կոնկրետ դեպքում իր, իբրեւ ՀՀ նախագահի խորհրդական աշխատելու փաստին, Արամ Սարգսյանն ուշադրություն հրավիրեց այն բանի վրա, որ մեր հասարակությունը պետք է հաղթահարի Լեւոն Տեր-Պետրոսյանի ռեժիմի թողած ծանր ժառանգությունը, երբ ընդդիմադիրներն իշխանություններին, իսկ իշխանություններն էլ ընդդիմության համար ընկալվում էին միմիայն որպես հակառակորդներ, եթե ոչ թշնամիներ: Մինչդեռ քաղաքակիրթ ընդդիմությունն իշխանությունների համար պետք է լինի ոչ ավելի, քան մրցակից, որը ձգտում է տիրանալ երկրի քաղաքական ղեկին իր ծրագրերը կենսագործելու համար: Կոնկրետ ՀԴԿ-ն ներկա իշխանությունների քաղաքականության մի շարք կարեւոր կողմերի հետ լիովին համաձայն լինելով (արտաքին քաղաքականության, ազգային խնդիրներին հետամուտ լինելու, երկրում ժողովրդավարության հաստատման, քաղաքական հետապնդումներին վերջ տալու եւ այլ հարցերում), միաժամանակ համաձայն չէ սոցիալական քաղաքականությանը, սեփականաշնորհման գործընթացին, նախկին իշխանությունների եւ նրանց կամակատարների հանդեպ չափից ավելի հանդուրժողականությանը եւ մի շարք այլ սկզբունքային մոտեցումների, որոնց առթիվ ներկայացրել է եւ շարունակելու է իշխանություններին ներկայացնել իր տեսակետները: Արամ Սարգսյանը նաեւ փաստեց, թե «ո՞վ է ճիշտ եւ ո՞վ սխալ» հարցին պետք է պատասխան տա կյանքը, ժողովրդի սոցիալական վիճակի, երկրի կայունության ու հասարակական համաձայնության «ցուցանիշը»:

ԱՍՊԻՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կտանգրծվի Մուխուրթունյան աղբյուրներ- Գորիս ջրատարը

Հակասական թվացող իրողություն է, որ Գորիսում ու ենթամարզում՝ չնայած բնական բազմաթիվ աղբյուրների գոյությանը, միշտ էլ մտահոգիչ է եղել խմելու ջրի հարցը: Առայժմ քաղաքը սնող Ակների ջուրը (45 լ/վրկ) խիստ լարված ու կանոնված է պահում ջրաբաշխման գրաֆիկը: Ոչ միայն քաղաքում, այլեւ ենթամարզի մի շարք գյուղերում (Հարժիս, Հալիձոր, Խոտ, Շինուհայր, Հարթաշեն, Որոտան) հարեւան Սիսիանի ենթամարզի տարածքի Մուխուրթունյան աղբյուրներ (ծովի մակարդակից 2609 մ բարձրություն)- Գորիս ինքնահոս ջրատարի շահագործումով հիմնավորապես կլուծվի խմելու ջրի հարցը:

Ինչո՞ւ ուշացավ ջրատարի շահագործումը, որը նախատեսված էր ամռանը: Հիդրավլիկ այդ կառույցի աշխատանքներն իրականացրել են մի շարք շինարարական ու պատվիրատու կազմակերպություններ (Գորիսի ՇՄՇ-5, Սիսիանի ՇՄՇ, Գորիսի «Զանգեզուրգազշին», «Հայտրանսգազշին»): Երբ աշխատանքների պայմանական ավարտից հետո այս տարվա ամռանն ավարտվեց ջրատարի հիդրավլիկ փորձարկումը, պարզվեց, որ Սիսիանի ՇՄՇ-ի կառուցած 18 կիլոմետրանոց հատվածում առկա են տեխնիկական բազմաթիվ թերություններ, մեծաղական խողովակների սխալ ծայրակցումներ, զոդման անբավարար որակ, անգամ՝ չզոդված հանգույցներ, հակակոռոզիոն՝ մեկուսացման անորակ տեխնոլոգիա, խողովակների տեղադրման նիշին անհամապատասխան խորություն եւ այլն: Անմիջապես դադարեցվեց փորձարկումը, սկսվեցին հանդման ու ապամոնտաժման աշխատանքները:

Ենթամարզի համար կարեւորագույն այս կառույցի որակով ու ժամանակին շահագործումով շահագրգիռ են ոչ միայն պատվիրատուն (քաղաքաշինության նախարարություն) ու կապալառուն («Հայգազշին ՓԲԸ»), այլեւ ամենաշահագրգիռ կողմը՝ Գորիսի համայնքային իշխանությունը, որը դառը դաս առնելով Սիսիանի ՇՄՇ-ի աշխատանքային խոտանից, հետեւողականորեն վերահսկում է կառույցի որակը:

Արդեն իրականացվել է 7 կմ-ի ապամոնտաժման ու վերականգնման աշխատանքը: Նորմալ ընթացքի ու հետեւողական աշխատանքի դեպքում Գորիսի ենթամարզ կհոսի Մուխուրթունյան (250 լ/վրկ) աղբյուրներ-Գորիս ջրատարի ջուրը:

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գորիս

Վիկտոր Համբարձումյանի կիսադարին՝ իր ատելի դպրոցի բակում

Վանաձորում թիվ 25 դպրոցը դեռեւս 2 տարի առաջ անվանակոչվեց մեծ գիտնական Վիկտոր Համբարձումյանի անվամբ: Երեկ, հոկտեմբերի 26-ին, տոնակատարություն էր դպրոցի բակում, ուր բացվեց գիտնականի կիսանդրին: Քանդակի հեղինակը Համլետ Մաշինյանն է, նախաձեռնության հեղինակը եւ հովանավորը Ազ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը: Բացմանը ջերմ խոսքեր ասացին ՀՀ ԳԱԱ որեգիդենտ Ֆադեյ Սարգսյանը, Լոռու փոխմարզպետ Դավիթ Լոքյանը, դպրոցի տնօրեն Ռուդիկ Քոչինյանը եւ ուրիշներ: Հուշարձանը օծեց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանը: Հանդիսությանը ելույթ ունեցան դպրոցի պատանի կարատեիստները, գեղարվեստական խմբերն ու ասմունքողները: Տոնակատարությունը շարունակվեց դպրոցի դահլիճում, ուր Սարգսյանը պատվոգիր հանձնեց հանրապետական «Պուսիկ մաթեմատիկոսներ» օլիմպիադայում 3-րդ տեղ գրաված 2-րդ դասարանցի Միհայել Զարգարյանին:

«Հայրիկս ակադեմիկոսի անունով է ինձ կոչել եւ ես հոգուս պարտքն էի համարում այսպիսի մի նախաձեռնություն իրականացնել», մեր զրույցի ժամանակ ասաց Վ. Դալլաքյանը:

ՊԵՆՈՒԵ ՄԻՔԱՅԵԱՆ
Վանաձոր

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հասցեներ

Չնայած Արմեն Դարբինյանի «հավերժ արհեստավարժ» ոիտակով կնքված կառավարության բոլոր ջանքերին, երկրի գործադիր իշխանության մոտ կես տարվա գործունեությունը աղացուցում է, որ «քարե ուժի» նորարարությունների մեծ մասը, այնուամենայնիվ, իրականություն չդարձավ: Մասնավորապես՝ ոլոֆեսիոնալներով կամ «արհեստավարժներով» կառավարության եւ նրա գերատեսչական աղարատը համալրելու նպատակով վարչապետի գրասենյակին կից այսպես կոչված կադրային բանկի ստեղծման գաղափարը.

Ո՞րն էր կադրային բանկի ստեղծման նպատակը: Կառավարության նախօրոք արված հայտարարության համաձայն, ՀՀ ցանկացած քաղաքացի, ով համոզված է, որ կարող է օգտակար լինել կառավարության համակարգում, ուղիղ հեռախոսակապով կարող էր դիմել համապատասխան ծառայությանը՝ կադրերի բանկում իր տվյալները գրանցելու եւ իր մասին իրազեկ դարձնելու նպատակով: Այդ ճանապարհով, փաստորեն, կառավարությունը կադրերի բանկում ունենալով տարբեր մասնագետների կամ արհեստավարժների (դրական իմաստով) մասին տվյալներ, անհրաժեշտության դեպքում կարող է ընտրել մասնագետների: Ի դեպ, այդ փորձը վաղուց հաջողությամբ կիրառվում է զարգացած երկրներում, որտեղ որակյալ մասնագետների տվյալներն ամփոփվում են հատուկ ցանկերում (Professional List), որոնք օգտագործվում են խորհրդատվական, փորձագիտական թիմերի ստեղծման, վերլուծական-հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ կադրերի ընտրության ժամանակ:

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Լեւոն Արեւշատյանի ներկայացրած տվյալների, բանկ դիմողների տվյալների հավաքագրումը դադարեցվել է դեռեւս հունիսին: Մինչ այդ, երկու ամսվա ընթացքում, դիմել էին ընդամենը 223 քաղաքացիներ, որոնցից եւ ոչ մեկը չի բավարարել կառավարության պահանջները (223-ից 73-ը ինժեներներ են, 48-ը՝ տնտեսագետներ, 24-ը՝ իրավաբաններ, 21-ը՝ ֆիզիկոս-մաթեմատիկոսներ եւ այլն): Ըստ որոշ Արեւշատյանի, ամբողջ խնդիրն այն է, որ դիմողների 90 տոկոսից ավելին գործազուրկ կամ մասնագիտությամբ չաշխատող մարդիկ են, հիմնականում՝ միջին տարիքից բարձր, որոնք աշխատանք գտնելու վերջին հույսով դիմել են կառավարությանը: Վերջիններիս «ոչ արհեստավարժությունը» աղացուցող միայն մեկ օրինակ բերվեց. տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարարի մոտ ծեւավորվելու էր փորձագիտական խումբ, սակայն վերոհիշյալ «դիմորդներից» եւ ոչ մեկը հարմար չգտնվեց այդ խմբում աշխատելու: Լ. Արեւշատյանի կարծիքով, բանկի գաղափարը ի սկզբանե է խեղաթյուրված եղել, որեմն է լիներ տվյալների բանկ այն մասնագետների համար, ովքեր, անկախ նրանից աշխատում են, թե ոչ, կարող են իրենց մասնագիտական կարողություններով ու փորձով երբեւիցե «փնտրված» մասնագետ լինել. հետեւաբար, բանկը չի կարող մարդկանց աշխատանքի տեղավորելու պարտավորություն վերցնել՝ կատարելով աշխատանքի եւ զբաղվածության կենտրոնի ֆունկցիաներ:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ չիրականացավ կադրերի բանկի գաղափարը: Այս հարցին կառավարության աղարագումը մոտավորապես այսպիսին է. գաղափարը նոր է, հետեւաբար՝ չկային մեխանիզմ, անհրաժեշտ նախադրյալներ, նախանշված չէին մասնագետներից պահանջվող որոշակի չափանիշները: Բացի այդ, ծառայությունը չէր կարող գործել առանց համակարգչային հագեցվածության: Տեղեկացվեց, որ մինչեւ դեկտեմբեր կավարտվեն բանկի ստեղծման նախապատրաստական աշխատանքները: Այս անգամ տվյալների բանկը կգործի նոր ձեւով. կառավարությունն ինքը կդիմի այն հնարավոր աղբյուրներին, որտեղ կենտրոնացած են մասնագետները, կտրվի ավելի բաց եւ թափանցիկ հայտարարություն, կիսակեցվեն մասնագետներից պահանջվող հայտարարությունները: Ստացված տվյալների հիման վրա կպատրաստվեն տեղեկագրեր եւ կուղարկվեն համապատասխան մարմիններին:

Այդ դեպքում ժամանակավրեպ չէ՞ր կադրերի բանկի ստեղծումը, եթե չկար համապատասխան ենթակառուցվածք, կամ ի՞նչ երաշխիքներ կան, որ վերը թվարկած ծրագրերը չեն մնա թղթի վրա: Եվ վերջապես, կադրերի բանկ կոչվածը որքանո՞վ հնարավորություն կտա անհրաժեշտ պատկերացում կազմելու հանրապետությանում առկա մասնագիտական ներուժի մասին:

Հ. Գ. Իսկ այսօր հանրապետության մասնագիտական ներուժը այսպիսին է. մասնագետների մի մասը աշխատում է միջազգային կազմակերպություններում, մի մասը՝ ակադեմիական, կրթական համակարգում, մի մեծ զանգված պետական կառավարման համակարգում, մի մասը գտնվում է երկրից դուրս եւ վերջապես՝ անհաջողակները կամ չեն աշխատում, կամ էլ աշխատում են ոչ մասնագիտությամբ: Ընդհանրապես, հանրապետությունում առկա գործազրկության եւ աշխատանքի տուկայի մասին «Ազգը» կանդրադառնա առաջիկայում:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔԱՍՅԱՆ

ՓՈՐՁ

Ո՞ւր մնաց կառավարության կադրերի բանկը

Բանկ դիմած 223 քաղաքացուց եւ ոչ մեկը չի համապատասխանել կառավարության «արհեստավարժության» չափանիշներին

ՆՈՐԱՍՏԵՂԾ

«Չի կարելի ինքնահոսի մատնել մանկավարժությունը»

Հանդիսված են մանկավարժական ակադեմիայի հիմնադիրները

Վերջերս Հայաստանում գործող ակադեմիաների թիվը համալրվեց եւս մեկով. ՀՀ արդարադատության նախարարության թիվ 744 հրամանով ստեղծվեց Մանկավարժական գիտությունների ակադեմիան: Սա առայժմ հասարակական հիմունքներով գործող կազմակերպություն է, որի նպատակն, ինչպես հավաստում է նորաստեղծ ակադեմիայի նորընծա նախագահ, երեւանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական գծով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գայանե Մուսայելյանը, մանկավարժական եւ հոգեբանական գիտությունների տեսության ու պատմության, մասնավոր մեթոդիկաների, հայ մարդու մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, տնտեսագիտական, իրավական, բնապահպանական դաստիարակության զարգացմանը նպաստելն է՝ սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների եւ դեռեւս չձեւավորված գաղափարախոսության պայմաններում:

Ակադեմիայի իսկական անդամներ (ակադեմիկոսներ) են ընտրվել Աբովյան մանկավարժական ինստիտուտի տարբեր ամբիոնների վարիչներ, պրոֆեսորներ, մանկավարժության դոկտորներ Վաչագան Հովհաննիսյանը, Արամ Աբրահամյանը, Լեմս Ներսիսյանը, Յուրի Յուզբաշյանը, Վիգեն Ավագյանը, Բելլա Եսայանյանը, հոգեբանության դոկտոր-պրոֆեսորներ Կարեն Ոսկանյանը, Սերգեյ Արզումանյանը, մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր Արամ Բալյանը, ԵՊՀ մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր, դոկտոր Հենրիկ Մախչանյանը, Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի մանկավարժության պրոֆեսոր, դոկտոր Սերգեյ Մանուկյանը, Ֆիզկուլտուրայի ինստիտուտի պրոռեկտոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր, դոկտոր Ֆրունզիկ Դազարյանը, ինստիտուտի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ռոբերտ Գալստյանը եւ մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր Բորիս Սաղյանը:

«Ինչո՞վ էր պայմանավորված Հայաստանում բազմացող ակադեմիաների թիվը մեկով ավելացնելու անհրաժեշտությունը» հարցին տկն Մուսայելյանը պատասխանում է. «Մանկավարժությունը եւ հոգեբանությունը նախկինում ընդգրկված էին ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայում, այնտեղից սատանում էին կրթության եւ դաստիարակության ոլորտների եւ մարտավարության հիմնադրույթները, անհրաժեշտ տեղեկատվական բազան եւ մեխանիզմների համակարգը: ԽՍՀՄ փլուզումից հետո այս երկու գիտությունները «որբացան», եւ արդեն մի քանի տարի ակադեմիական որեւէ կառույց այդ խնդիրներով չի զբաղվում, մինչդեռ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում համապատասխան օղակներ ստեղծված են: Մենք ակնկալում էինք նման մի օղակի ներդրումը Ազգային ակադեմիայի կառույցում, սակայն, չնայած սկզբունքային առարկություններ չկային, սայլը տեղից չշարժվեց (հիմնական խոչընդոտը ֆինանսական է), իսկ կրթության, դաստիարակության պրակտիկայի վիճակն օրըստօրե ծանրանում է: Այստեղից՝ հանրապետության առաջատար մանկավարժ-գիտնականների ներուժն առայժմ հասարակական այս կառույցում կենտրոնացնելու անհրաժեշտությունը՝ հետագայում պետական (պետական) կարգավիճակ ստանալու ակնկալությամբ:

Որո՞նք են, ըստ տկն Մուսայելյանի, ակադեմիայի մերձակա անելիքները: Ամենից առաջ, թերեւս, տեսությունպրակտիկա «կապող» մեխանիզմների մշակումը (մասնավորապես, ակադեմիային կից դպրոցների տնօրենների խորհրդի ստեղծումը), սոցիոլոգիական, վերլուծական աշխատանքների անցկացումը՝ առաջնահերթությունների «երեւակման» նպատակով, համապատասխան աշխատանքային խմբերի ձեւավորումը: Չի կարելի անվրդով նայել, թե ուր տարի շարունակ ինչպես են ինքնահոսի մատնված երկու ակադեմիական գիտություններ, վստահ է ակադեմիայի նախագահուհին. «Մեր գլխավոր հարստությունը մարդն է, եւ դաստիարակությունն է, որ բոլոր քաղաքակիրթ երկրներում առաջնայինը մարդու դաստիարակությունն է, որի առանցքը պետության անմիջական պարտականությունն է: Մեր ակադեմիան կարող է դառնալ փորձագետների այն օղակը, որ խորհրդակցական կարգով համագործակցելով կրթության եւ գիտության կառույցների հետ, կմասնակցի կոնկրետ նորմատիվային փաստաթղթերի մշակմանը եւ փորձարկմանը, տեսության եւ պրակտիկայի համաձայնեցմանը՝ կրթության եւ դաստիարակության ամբողջական հայեցակարգի ձեւավորման հեռանկարով»:

ԼԻԼԻԹ ԳՈՂԱՍՅԱՆ

Լոռին մայրաքաղաքից հետո արդյունաբերական մեծ պոտենցիալ ունեցող երկրորդ տարածաշրջանն է

Ուրբաթ օրը Վանաձորի պետական տիկնիկային թատրոնում տեղի ունեցավ Լոռու արդյունաբերողների հանդիպում եւ արտադրանքի ցուցահանդես-վաճառք: Բացմանը ներկա էին Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արամ Վարդանյանը, նորագույն տեխնիկայի ներդրման հանձնաժողովի նախագահ Վահան Համազասպյանը, տնտեսագետ գիտնականներ, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, փոխմարզպետ Դավիթ Լոքյանը, Վանաձորի քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանը եւ ուրիշներ: Ցուցադրված էին Վանաձորի «Բազում ֆիրմա», «Լոռի կարի ֆաբրիկա», տրիկոտաժի ձեռնարկությունների բաղադրած բազմատեսակ հագուստեղենը, «Տեխնոսարք», «Վասպուրական», «Ավտոմատիկա», «Էլեկտրոն», «Ավտոգենմաշ», «Լուսատեխնիկ», գարեջրի եւ ոչ ոգելից խմիչքների գործարանների արտադրանքը: «Լոռին երեւանից հետո արդյունաբերական մեծ պոտենցիալ ունեցող երկրորդ տարածաշրջանն է Հայաստանում, ասաց Ա. Վարդանյանը: Պետք է ամեն ինչ անենք նպաստելու ինչպես եղած հնարավորություններն առավելագույնս օգտագործելու, այնպես էլ նոր կապեր ստեղծելու, արդյունաբերական արտադրանքի իրացումն ընդլայնելու համար»: Չնայած ցուցահանդեսը մարզային է համարվում, սակայն մյուս բնակավայրերի ձեռնարկություններից գրեթե արտադրանք չէր ներկայացված: Փոխարենը ցուցադրված էին Գյումրիի «Էդգար» ՓԲԸ-ի տրիկոտաժի ֆաբրիկայի, Դիլիջանի հանքային ջրերի եւ այլ գործարանների արտադրանքները: Եղան գործնական առաջարկություններ, ձեռք բերվեցին որոշակի պայմանավորվածություններ: Օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որին մասնակցում էին տեղական եւ հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Զարգացած երկրների արդյունաբերությունը ոտքի է կանգնել օգտագործելով վաղուց արդեն քննություն բռնած մեթոդներ, մասնավորապես արտասահմանյան արտադրանքի ներմուծման խիստ սահմանափակումը, որը կնպաստի տեղականի իրացմանը: Հայաստանը եւս մեր կարծիքով պետք է գնա այդ ճանապարհով: Իսկ ի՞նչ ճակատագիր են ունենալու թալանված եւ թալանվող խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները: Ո՞վ է պատասխան տալու այդ ամենի համար: Այս մասին որեւէ խոսք, ցավոք, չեղավ: Դրանք այնպիսի հարցեր են, որոնք հնարավոր չէ լուծել տարբեր հանդիպումներ եւ հավաքներ կազմակերպելով:

ՄԱՐՏԻՆ ՄԵՍՔՈՆՅԱՆ

Վանաձոր

Տեղի ունեցավ Արեւելագիտության ինստիտուտի գիտական նստաշրջանը

Հոկտեմբերի 22-23-ին անցկացվեց ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տարեկան գիտական նստաշրջանը: Արեւելագիտության սեկտորի հիմնադրման 40-ամյակին նվիրված նստաշրջանն անց էր կացվում ինստիտուտի նիստերի դահլիճում: Հոկտեմբերի 22-ին լիագումար նիստը սկսեց ինստիտուտի տնօրեն պ. գ. դ., պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի բացման խոսքով: Նիստի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի հիշատակը, որ երկար տարիներ տնօրենի պատասխանատու ղեկավարում էր Արեւելագիտության ինստիտուտի գործունեությունը: Պրոֆ. Հովհաննիսյանն իր ելույթում կարեւորելով գիտական այս միջոցառման նշանակությունը, միաժամանակ խոսեց ակադեմիկոս Սարգսյանի գիտական վաստակի եւ այն ավանդի մասին, որ նա ներդրել էր ինստիտուտում: Ն. Հովհաննիսյանը միաժամանակ ընդգծեց ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի դերը արեւելագիտության սեկտորի հիմնադրման, ինչպես նաեւ ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի ստեղծման գործում:

Արեւելագիտության ինստիտուտի տարեկան գիտական նստաշրջանում հնչեցին բազմաթիվ ելույթներ ուրարտագիտության, արաբագիտության, իրանագիտության, հրազագիտության, թուրքագիտության թեմաներով, ընթերցվեցին Մերձավոր եւ Միջին Արեւելքի նորագույն օրջանի պատմության կարեւորագույն խնդիրներին նվիրված զեկուցումներ: Գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող այս զեկուցումները ունեին նաեւ քաղաքական նշանակություն: «Ազգի» թղթակիցը մեկ առ մեկ անդրադառնալ դրանց բովանդակությանը, ինչ խոսք, անհնար է: Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք գտնում սահմանափակվել պ. գ. դ., պրոֆ. Ն. Հովհաննիսյանի «Հայաստանը անդրկովկասյան-մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի քաղաքական գործոն» խորագիրը կրող զեկուցումով: Նա իր զեկուցման մեջ նախ տվեց քաղաքական գործոն հասկացողության սահմանումը, այնուհետեւ դասակարգեց կառուցողական եւ արգելակող գործոնները: Ելնելով այդ դասակարգումից, Ն. Հովհաննիսյանը ցույց տվեց, որ Հայաստանը թե կառուցողական գործոն է (Անդրկովկասում եւ Միջին Ասիայում Ռուսաստանի, Անդրկովկասում Իրանի համար) եւ թե խոչընդոտող (Թուրքիայի համար), քանի որ դասնեում է պանթուրքիզմը:

Ն. Հովհաննիսյանը հիմք ընդունելով պանթուրքիզմի ուղղվածությունը բացի Ռուսաստանից եւ Իրանից, արաբական աշխարհի դեմ, ընդգծեց, որ Հայաստանը գործոն է արաբական աշխարհի համար: «Այս ամենը, եզրակացրեց նա, բավարար հիմքեր է տալիս պնդելու, որ Հայաստանը անդրկովկասյան-մերձավորարեւելյան տարածաշրջանում ինքնուրույն քաղաքական գործոն է»:

Հոկտեմբերի 23-ին գումարվեց վերոհիշյալ գիտական նստաշրջանի վերջին երկու նիստը: Այնուհետեւ տեղի ունեցավ զեկուցումների քննարկումն ու նստաշրջանի ամփոփումը: Դրան հետեւեց «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» ժողովածուի 17-րդ հատորի շնորհանդեսը, որը սույն թվականին հրատարակեց Արեւելագիտության ինստիտուտը:

ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՇԽ

Միջազգային

Ասիայից եւ Ռուսաստանից հետո ֆինանսական ճգնաժամը տարածվում է նաեւ Լատինական Ամերիկայի երկրներում: Մինչ քաղաքական գործիչները հաղթեղորեն փորձում են խիստ վերահսկողության ծրագիր մշակել, սակարաններում փլուզումները շարունակվում են, կապիտալները ասիճանաբար փոխարկվում են ամերիկյան զանձարեցական մուրհակների, իսկ կառավարությունները ու տնտեսագետները վերանայում են տնտեսական աճի իրենց կանխատեսումները: Նվազեցնելով ակնկալվող աճի տոկոսները:

Տարածաշրջանի երկրների ղեկավարների առաջին արձագանքն այն եղավ, որ փորձեցին դասադարձել ֆինանսական ճգնաժամի «հիստերիան» եւ հռչակել իրենց երկրների բացառիկությունը: Սեպտեմբերին Վաշինգտոնում կայացած համաժողովի ընթացքում նրանք միաձայն հայտարարեցին. «Մեզ չի կարելի համեմատել Ասիայի կամ Ռուսաստանի հետ»:

Առաջին հայացքից այս հայտարարությունը ճշմարտանման է: Հաճախ ցավագին բարեփոխումների տասը տարիներից հետո տարածաշրջանի տնտեսագետները կարծես թե ճիշտ ուղի էին ընտրել, իսկ որոշ երկրներ նույնիսկ օրինակելի էին համարվում: 1982 թ. պարտքային ճգնաժամից ի վեր առաջին անգամ անցյալ տարի լատինամերիկյան երկրները արձանագրել էին լավագույն ցուցանիշները. տարեկան միջին աճը կազմել էր 5 տոկոս, աղաքը՝ 10 տոկոսից պակաս: Ի տարբերություն ասիական երկրների, այստեղ պարտքն ավելի ցաս պետական է, քան մասնավոր: Հետեւաբար դրա վերահսկումն ավելի հեշտ է: Ինչ վերաբերում է սեփականաշնորհմանը, լատինամերիկյան երկրներն այն իրականացրել են ավելի մտածված կերպով, քան Ռուսաստանը. պետական խոշոր մոնոպոլիաները մասնատվել են մրցակից փոքր միավորների:

Սակայն ներկայումս զգուշավոր դարձած ֆինանսիստները առավել օրջահայաց վերաբերմունք են հանդես բերում Լատինական Ամերիկայի կառուցվածքային թուլություններ ունեցող երկրների հանդեպ: Դրանցից առաջինն այն է, որ լատինամերիկյան երկրները կախման մեջ են ԱՄՆ-ից: Վերջինիս տնտեսական զարգացման դանդաղումը կանդրադառնա լատինամերիկյան երկրների վրա: Երկրորդ թուլությունը տարածաշրջանի երկրների արտահանական անկայունությունն է: Մեքսիկան, Պերուն, Վենեսուելան, Կոլումբիան, Չիլին լրջորեն տուժում են հումքի, մասնավորապես նավթի ու պղնձի գների անկումից: Դոլարի փոխարժեքի բարձրացումը, որին շաղկապված են լատինամերիկյան մի քանի դրամարժույթներ, ինչպես նաեւ Ասիայի ֆինանսական ճգնաժամի փլուզումը մեծ վնասներ պատճառեցին լատինամերիկյան երկրների պատրաստի արտադրանքի արտահանումներին: Դրա հետեւանքով տարածաշրջանի առեւտրային պակասուրդը ներկայումս հասել է 80 մլրդ դոլարի: Բացի դրանից, ինչպես վկայում է «Էքսպրես» հանդեսը, լատինամերիկյան երկրների մեծամասնությունը ներքին փոքր խնայողություններ ունի, ուստի ստիպված է տնտեսական աճի ապահովման ոլորտում հույսը դնել կապիտալների մշտական ներհոսի վրա: Մինչդեռ այդ ներհոսը վերջերս նվազել է: Միայն օգոստոսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 12-ը Բրազիլիայից արտահոսել է 22 մլրդ դոլար եւ տեղական սակարանները փլուզվել են:

Ներկա պայմաններում տարածաշրջանի երկրների կառավարությունները կանգնած են երկընտրանքի առջեւ: Նրանք պետք է կամ արժեզրկեն իրենց դրամարժույթները, որն անվերահսկելի կդարձնի տնտեսությունը եւ կհանգեցնի գերտաքացի, կամ էլ պետք է բարձրացնեն բանկային զեղչադրույքները, կրճատեն ծախսերը եւ հայտնվեն լճացման հերթական փուլում: Կոլումբիան եւ Վենեսուելան ընտրեցին առաջին տարբերակը՝ իրենց արժույթների ազատ փոխարժեքներ՝ սահմանելով: Այս երկրները նախընտրեցին խստությունների դիմել: Արգենտինան 1998 թ. մակարդակով սառեցրեց 1999 թ. համար նախատեսված պետական ծախսերը եւ ներկայումս ուսումնասիրում է ավելացված արժեքի հարկի ընդլայնման հնարավորությունը: Բրազիլիան բանկային զեղչադրույքները բարձրացրել եւ հասցրել է գրեթե 50 տոկոսի: Մեքսիկան կասեցրել է սպառմանը հասկացվող վարկերը: Չիլիի կառավարությունը խստացրել է բանկային ռեզերվների կանոնադրությունը եւ նախատեսում է օրենք, որով պետք է սահմանափակվեն ներմուծումները ասիական այն երկրներից, որոնք արժեզրկել են իրենց դրամարժույթները:

Այս բոլոր որոշումները անմիջապես հանգեցրին լատինամերիկյան երկրների տնտեսական աճի տեմպերի կտրուկ դանդաղեցման եւ բնակչության մահացության խորացման: Մասնավորապես Ռիո դե Ժանեյրոյում բժիշկներից շատերը ստիպված կրճատում են իրենց աշխատաժամերը, որպեսզի չկորցնեն հաճախորդներին: «Էստադու դու Սաո Պաուլու» օրաթերթում բրազիլացի տնտեսագետ Էդմար Բաշան գրում է, թե «առաջիկա տարիներին համաշխարհային լճացման առաջացման հարցը վճռվում է Բրազիլիայում»: Իրոք, 160 մլն բնակիչ ունեցող տարածաշրջանային այդ հսկան աշխարհի տնտեսական 9-րդ տերությունն է, եւ ամերիկյան արտադրանքի խոշոր գնորդներից մեկը: Բրազիլիան ջինսերի համաշխարհային երկրորդ խոշորագույն օդուկն է, հեռուստացույցների վաճառքի գծով երրորդը, «Սակ դոնալդս» սրճարանների գծով յոթերորդը: Այդ երկիրը ԱՄՆ-ից հետո հաջորդ տեղն է գրավում վերազգային խոշոր ընկերությունների ներդրումների ասպարեզում: Բայց Բրազիլիան էլ ունի իր թերությունները: 1999 թ. նրա արտաքին ֆինանսավորման կարիքները կհասնեն 50 մլրդ դոլարի: Երկրի բյուջեի պակասորդը կազմում է նրա ներքին համախառն արդյունքի 7 տոկոսը, եւ ինչ հավանական է, որ եկող տարվա համար կառավարության նախատեսած 4 տոկոսանոց աճն ապահովվի, մանավանդ զեղչադրույքների վերջին բարձրացումից հետո:

Ավանդաբար հոռետես համարվող բրազիլացիներին վերջերս լավատեսություն են ներշնչում օտարերկրացիները: Այսպես, իսրայելցի տնտեսագետ Էթան Շերշինսկին սեպտեմբերին Բուենոս Այրեսում գիտաժողով անցկացրեց լատինամերիկյան ընդհանուր օդուկայի «Մերկոսուրի» վրա ասիական ճգնաժամի ազդեցության վերաբերյալ: Նրա կարծիքով տարածաշրջանը ի վերջո կկարողանա օգուտ քաղել այդ ճգնաժամից, քանի որ ասիական երկրներից դուրս բերվող կապիտալները ի վերջո կներդրվեն լատինամերիկյան առավել հեռանկարային օդուկայում:

Պ. Բ.

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Լատինական Ամերիկայի կասեցված խոյանքը

Նամերիկյան մի քանի դրամարժույթներ, ինչպես նաեւ Ասիայի ֆինանսական օդուկների փլուզումը մեծ վնասներ պատճառեցին լատինամերիկյան երկրների պատրաստի արտադրանքի արտահանումներին: Դրա հետեւանքով տարածաշրջանի առեւտրային պակասուրդը ներկայումս հասել է 80 մլրդ դոլարի: Բացի դրանից, ինչպես վկայում է «Էքսպրես» հանդեսը, լատինամերիկյան երկրների մեծամասնությունը ներքին փոքր խնայողություններ ունի, ուստի ստիպված է տնտեսական աճի ապահովման ոլորտում հույսը դնել կապիտալների մշտական ներհոսի վրա: Մինչդեռ այդ ներհոսը վերջերս նվազել է: Միայն օգոստոսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 12-ը Բրազիլիայից արտահոսել է 22 մլրդ դոլար եւ տեղաշարժեր՝ սահմանելով: Այս երկրները նախընտրեցին խստությունների դիմել: Արգենտինան 1998 թ. մակարդակով սառեցրեց 1999 թ. համար նախատեսված պետական ծախսերը եւ ներկայումս ուսումնասիրում է ավելացված արժեքի հարկի ընդլայնման հնարավորությունը: Բրազիլիան բանկային զեղչադրույքները բարձրացրել եւ հասցրել է գրեթե 50 տոկոսի: Մեքսիկան կասեցրել է սպառմանը հասկացվող վարկերը: Չիլիի կառավարությունը խստացրել է բանկային ռեզերվների կանոնադրությունը եւ նախատեսում է օրենք, որով պետք է սահմանափակվեն ներմուծումները ասիական այն երկրներից, որոնք արժեզրկել են իրենց դրամարժույթները:

Այս բոլոր որոշումները անմիջապես հանգեցրին լատինամերիկյան երկրների տնտեսական աճի տեմպերի կտրուկ դանդաղեցման եւ բնակչության մահացության խորացման: Մասնավորապես Ռիո դե Ժանեյրոյում բժիշկներից շատերը ստիպված կրճատում են իրենց աշխատաժամերը, որպեսզի չկորցնեն հաճախորդներին: «Էստադու դու Սաո Պաուլու» օրաթերթում բրազիլացի տնտեսագետ Էդմար Բաշան գրում է, թե «առաջիկա տարիներին համաշխարհային լճացման առաջացման հարցը վճռվում է Բրազիլիայում»: Իրոք, 160 մլն բնակիչ ունեցող տարածաշրջանային այդ հսկան աշխարհի տնտեսական 9-րդ տերությունն է, եւ ամերիկյան արտադրանքի խոշոր գնորդներից մեկը: Բրազիլիան ջինսերի համաշխարհային երկրորդ խոշորագույն օդուկն է, հեռուստացույցների վաճառքի գծով երրորդը, «Սակ դոնալդս» սրճարանների գծով յոթերորդը: Այդ երկիրը ԱՄՆ-ից հետո հաջորդ տեղն է գրավում վերազգային խոշոր ընկերությունների ներդրումների ասպարեզում: Բայց Բրազիլիան էլ ունի իր թերությունները: 1999 թ. նրա արտաքին ֆինանսավորման կարիքները կհասնեն 50 մլրդ դոլարի: Երկրի բյուջեի պակասորդը կազմում է նրա ներքին համախառն արդյունքի 7 տոկոսը, եւ ինչ հավանական է, որ եկող տարվա համար կառավարության նախատեսած 4 տոկոսանոց աճն ապահովվի, մանավանդ զեղչադրույքների վերջին բարձրացումից հետո:

Ավանդաբար հոռետես համարվող բրազիլացիներին վերջերս լավատեսություն են ներշնչում օտարերկրացիները: Այսպես, իսրայելցի տնտեսագետ Էթան Շերշինսկին սեպտեմբերին Բուենոս Այրեսում գիտաժողով անցկացրեց լատինամերիկյան ընդհանուր օդուկայի «Մերկոսուրի» վրա ասիական ճգնաժամի ազդեցության վերաբերյալ: Նրա կարծիքով տարածաշրջանը ի վերջո կկարողանա օգուտ քաղել այդ ճգնաժամից, քանի որ ասիական երկրներից դուրս բերվող կապիտալները ի վերջո կներդրվեն լատինամերիկյան առավել հեռանկարային օդուկայում:

Պ. Բ.

Ճապոնացիները Հայաստանում հազվագյուտ ծաղիկներ են հավաքում

Եթե հուլիսին անցնես Գյումրիից Երեւան տանող խճուղով, կթվա, թե անցնում ես հյուսիսամերիկյան մահվան հովտով: Ամռան կեսերին Արարատյան դաշտավայրում աճում են միայն սեխ, մրգեր, բանջարեղեն:

Իսկ եթե նույն ճանապարհով Գյումրիից Երեւան գնաս մայիսին, կթվա, թե հայտնվել ես նախնադարյան դրախտում, որը ողողում է իոլանդական կանաչի հյութալի երանգները:

Գարունը Հայաստանում իսկապես շատ գեղեցիկ է: Երեւանից բառացիորեն մեկ ժամվա ընթացքում մեքենայի անցած ճանապարհին իրար են հաջորդում հինգ բնական գոտիներ, որոնցից յուրաքանչյուրին հատուկ է յուրօրինակ բնական հարստություն: Երբեմն խճուղու մի կողմում խիտ անտառ է, մյուս կողմում կիսաչոր, հատակածային ճահճուտներ, լեռներ կամ-ալոյան մարգագետին: Աշնանն այս տարածությունից, իհարկե, ծաղիկները չէ, որ տուկա են հանվում, այլ օգտակար վիտամիններով հարուստ մրգերն ու բանջարեղենը: Չյունը դեռ չհալված, սոիտակի տակից սկսում է բարձրանալ կանաչը: Գարնան սկզբից մինչեւ աորիլ այդ կանաչը զարդարվում է վառ ու նուրբ գույնի ծաղիկներով: Իսկ մայիս-հունիսին կարմիր, կապույտ, վարդագույն, դեղին, մորեգույն ու մանուշակագույն ալիքներ են հոսում լեռների փեշերով ու դաշտերով: Հայաստանում աճող բույսերի բազմազանությունը, իսկապես, աղբեցուցիչ է: Երկրում իրար կողքի ձգվում են լեռնային, անապատային գոտիները, խիտ անտառները, ճահճուտները՝ ջրային ֆաունայով ու ֆլորայով, մերձարեւադարձային գոտին՝ երկրի հյուսիսում եւ հարավում, ալպիանմարգագետինները՝ վայրի ծաղիկներով ու թփերով: Նույնիսկ կուսական դաշտեր կան՝ վայրի բնությամբ, նախնադարյան՝ երկրի օդանցը բուրող, որը միգուցե 12-15 հազար տարվա պատմություն ունի: Մրգերից աճում են խնձոր, բալ՝ խաղողի բազմաթիվ տեսակներ, տանձ, դեղձ, նուռ, իսկ ծիրանն Ալեքսանդր Մեծի բանակը հենց Հայաստանից տարավ Հունաստան, որից հետո հռոմեացիք տարածեցին Հռոմայի Եվրոպայում:

Հայաստանում մոտ 3500 տեսակ բույս կա, որը կովկասյան տարածաշրջանում տարածված բուսականության կեսից ավելին է: Ամբողջ Եվրոպայում մոտ 20 հազար բույս կա, իսկ տարածքով միայն Բելգիային հավասար Հայաստանը դրա 1/6-ն ունի:

Հայկական բնությունը Հայաստանից դուրս էլ մեծ ճանաչում ու սեր է վայելում: Վերջերս ճապոնացի բուսաբանները սովորություն են դարձրել ամեն տարի գարնանը Հայաստան այցելել՝ հավաքելու միայն այստեղ հանդիպող հազվագյուտ եւ ոչնչացման եզրին գտնվող ծաղիկների նմուշներ: Ճրոսաշրջիկները գալիս են մայիսին, երբ հովիտներում բնությունն արդեն փթթել է, իսկ լեռներում նոր սկսում է ծաղկել: Նրանց ընդունում ու ճանապարհում է միջազգային ճանաչում վայելող բուսաբան պրոֆեսոր Նորա Գաբրիելյանը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայից: Նա հեշտությամբ կարող է բացատրել, թե ինչն է «ծաղիկներ փնտրող» այս այցելուներին Հայաստան ձգում ապացուցելով, որ ճապոնացիների հետաքրքրությունը հայկական բնությամբ այնքան էլ տարօրինակ չէ, ինչքան կարող է թվալ առաջին հայացքից:

Ճապոնիայում, որտեղ իմբանան ծաղիկներ փնջելու արվեստը, դարձել է ազգային ավանդույթի պես մի բան, բարձր են գնահատվում գեղեցիկ ծաղիկները: Հիրիկների հազվագյուտ տեսակները, հակինթը, զանգակները, թրատուսանները, մեխակները ու խոլորձները այն հազարավորներից մի քանիսն են, որոնք գրավում են ճապոնացի զրոսաշրջիկ բուսաբանների սիրտը եւ ամեն տարի գարնանը նրանց բերում ուխտագնացության:

ԱԻՄ-ից թարգմանեց
Ռ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Բանակցությունների հաջորդ փուլում՝ Երուսաղեմը

ՈՍԼՈ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՏԱՍ: Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Յասեր Արաֆաթը կիրակի օրը կարճաժամ այցելել է Ալժիրում ու Մարոկոյում, որտեղ Ալժիրի նախագահ Լամին Զերուալին եւ Մարոկկոյի միապետ Հասան II-ին ծանոթացրել է ԱՄՆ-ում կայացած իսրայելա-պաղեստինյան բանակցությունների արդյունքներին: Ալժիրում Զերուալի հետ ունեցած հանդիպումից հետո Արաֆաթն ասել է, որ Միացյալ Նահանգներում ձեռք բերված պայմանավորվածությունների շնորհիվ պաղեստինցիները կարող են վերադարձնել «իրենց հողերի եւս մեկ մասը»: Նա ընդգծել է, որ պաղեստինյան կողմը «պատրաստվում է բանակցությունների նոր փուլին, որի ընթացքում կձգտի հասնել իր տարածքի առավել կարեւոր մասի ազատագրմանը»: Խոսքը վերաբերում է երուսաղեմին՝ «Պաղեստինի անկախ պետության մայրաքաղաքին»: Միեւնույն ժամանակ, ըստ Արաֆաթի, չկան երաշխիքներ, որ իսրայելցիները կկատարեն կնքված համաձայնագրերը: Ոաբաթում Հասան II-ի հետ կիրակի օրը կայացած հանդիպումից հետո հանդես գալով մամուլի համար հայտարարությամբ՝ Յասեր Արաֆաթն ընդգծել է ամերիկյան վարչակազմի «կոչս» դիրքորոշումը, որն զգալիորեն նպաստել է բանակցությունների արդյունավետությանը: Ավելի վաղ Արաֆաթը նմանօրինակ առաքելությամբ այցելել էր Կահիրե:

ՎՐԱՍՏԱՆ

Շեւարդնաձեն կմասնակցի Թուրքիայի տոնակատարությանը

ՓԲՐԼԻՍԻ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն կմասնակցի Թուրքիայի Հանրապետության 75-ամյակի տոնակատարությանը: Վրացական կառավարական պատվիրակությունը նախագահի գլխավորությամբ հոկտեմբերի 28-ին կմեկնի Անկարա: Այցի օրջանակներում Էդուարդ Շեւարդնաձեն կհանդիպի Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելին, կայցելի թուրքական հանրապետության առաջին ղեկավար Քեմալ Աթաթուրքի դամբարան: Հոկտեմբերի 29-ին Վրաստանի նախագահը կայցելի Թուրքիայի մեջլիս, որտեղ կկայանա Թուրքիայի Հանրապետության 75-ամյակի տոնակատարության հանդիսավոր արարողությունը:

Արեւմտյան զորախմբի հրամանատարը ազատվեց աշխատանքից

ՓԲՐԼԻՍԻ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Հոկտեմբերի 19-ին Վրաստանի Արեւմուտքում զինված խռովության սանձահարման գործողության ժամանակ թույլ տված լուրջ սխալների կապակցությամբ զբաղեցրած պաշտոնից ազատվել է Վրաստանի ՁՈՒ արեւմտյան զորախմբի հրամանատար Ջաուր Ուլյաձեն: Որոշումը կայացվել է Վրաստանի ռազմական կոլեգիայի արտագնա նիստում, որին մասնակցում էին ազգային անվտանգության խորհրդի, երկրի խորհրդարանի պատգամավորներ:

Պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Դավիթ Թեւզաձեն կոլեգիայի նիստում հայտարարել է, որ հնարավոր ապակայունացման մասին տեղեկատվությունը ստացվել էր դեռեւս սեպտեմբերին, բայց այդ ակցիան կանխելու ուղղությամբ ոչինչ չէր ձեռնարկվել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Ավարտվեց ջազի միջազգային փառատոնը

Ջազի միջազգային փառատոնը, 12 տարի լռելուց հետո, մեկնարկ վերցրեց օրերայի եւ բալետի բեմահարթակում: Այսօր չեմ ուզում անդրադառնալ կազմակերպիչների դրականին ու բացասականին, այլ հայ ջազի սիրահարներին եմ ներկայացնում իմ եւ ոչ միայն իմ տպավորությունները փառատոնի 5 օրերի վերաբերյալ:

Ջազային երաժշտության առանձնահատկությունն այն է, որ իմպրովիզացիոն սկզբունքն առաջին պլան է գալիս: դա նշանակում է, որ հանդիսատեսից, երաժշտական զգացմունքը դահիի ազդեցությամբ, նաեւ երաժիշտներ, ինչպիսիք են Տիգրան Փեսմանջյանը, Արմեն Հյուսնունց սաքսոֆոնահար, Կարեն Գասպարյանը, դաշնակահար, բասկիթարահս Սիմոն Դոլմազյանը: Չիկոն նկատել է ինչպես փոքր խմբերում, այնպես էլ Կ. Օլբերյանի հետ պեսական ջազ նվագախմբում, մեծ փորձ ունի ու շատ սիրված է ջազի երկրպագուների կողմից: Նշեմ նաեւ հրավիրվածներից մի քանիսին: Արտասահմանից յուրաքանչյուր օր մասնակցում էր մեկ խումբ: Հրավիրվածների թվում էին նաեւ Գեորգի Գառնյանի եւ Ալիկ Ջաֆարյանի էլիտները (Ռուսաստան), Լեոնիդ Պտաշկա

(Իսրայել) դաշնակահար, Նյու Օռլեանի երկրորդ խումբը, Քլարենս Ցոնսոնի (ԱՄՆ) առաջակը, New York Voices (ԱՄՆ) աշխարհահռչակ ճանաչում գտած վոկալ ջազային խումբը, «Յոթերորդ փուլային անկյունում» գոյկող ջազայրմ խումբը (ԱՄՆ), եւ ամենահետաքրքիրը «Night Ark» խումբը, որտեղ օգտագործված են հայկական նվագարաններ, ինչպես նաեւ ուդը:

«Night Ark» (ԱՄՆ) առաջակը Արա Դենկյան (ուդ), Արմեն Դոնելյան (դաշնամուր), Մարկ Ջոնսոն (կոնտրաբաս) եւ Արո Բոյաջյան (հարվածային գործիքներ): Այս առաջակը պարզապես հիացրեց ու ներկաներին ծուլեց իր բարձր կատարողական արվեստին եւ ստացվեց համաթարափակ բազմաձայն հնչեղությամբ երգչախմբի ելույթ: Մեկ հոդվածով հնարավոր չէ անդրադառնալ բոլորին, սակայն ջազ փառատոնի գլխավոր հովանավոր Նուշիկյան ասոցիացիան եւ մնացած բոլոր հովանավորները, որոնց թիվը անցնում է տասից, ամեն ինչ արել էին, որպեսզի այդ հինգ օրերի ընթացքում մատուցվեն բարձրաճաշակ ջազային կատարումներ, որին հայ հանդիսատեսը հնարավորություն չուներ ծանոթանալու: Իհարկե, կային թերություններ, նշեմ նրանցից ամենաայլ ծակողը, դա բեմի վրա հայտնված երեք, երբեմն էլ վեց օրերատորներն էին, որոնք կամ կանգնած, կամ հատակին նստած, պոզած, կամ էլ ժամերով հեռեւով դեռի հանդիսատեսն աշխատում էին, շատ ժամանակ ծածկելով ելույթ ունեցողներին:

Այժմ ներկայացնում եմ մի քանի կարծիքներ փառատոնի եւ երաժիշտների մասին: Կոմպոզիտոր **Ստեփան Շահարյան**. «Ես ապրում եմ տոնական տրամադրություն, որպես երաժիշտ կուզեի լսել այն ջազը, ջազային մեկնաբանությունը, որը գրի է առնվում մտածված ու մշակված, իհարկե, նաեւ կարեւորություն եմ տալիս իմպրովիզացիային, բայց միայն այդ սկզբունքներով ջազը զարգացնելը դառնում է հոգնեցուցիչ: Շատ հավանել եմ New York Voices (ԱՄՆ) խմբին, որտեղ ծուլվել էին երկու սկզբունքներ մեկը ջազի, մյուսը կոնսերվատորիայի տված սկզբունքները, որ միասին ծուլվելով տալիս էին լավ արդյունք: Նախկինում ջազի մատուցման ձեւի (մեկը մյուսին փոխարինել), խոսքս գործիքների մասին է: Այդ ձեւը առանձին հավաքներում ընդունելի է, բայց բեմի վրա դա ես չեմ ընդունում, կարծում եմ, որ մեկ առ մեկ պետք է նորոգվի կատարումից առաջ: Իսկ նմանատիպ փառատոնը մեծ դաս է, ջազի կոնսերվատորիա, որը դասաիարակչական մեծ դեր կարող է խաղալ: Իսկ ի՞նչ ջազը, ասեմ, կիսրոնի եւ նարինջի պատվաստումից ծնվեց գրեյֆրութը Ամերիկայում, ջազն էլ ստեղծվեց սինթեզից»:

Արա Դենկյանի 40 տարվա երազանքը վերջապես կատարվեց, եկավ Հայաստան, նվագեց հայ բեմում եւ ուրախությունն ու հիացմունքը հայտնեց փառատոնի կազմակերպիչներին ավելացնելով, որ «այն հոգեւոր արժեքները, որ տվել է ինձ, ես այսօր կարողացա փոխհատուցել իմ հայ ժողովրդին»:

Ջորջ Ավագյանը ջազի ամենաթունդ սիրահարն ու երկրպագուն է, որ հատուկ ԱՄՆ-ից ժամանել է ներկա գտնվելու փառատոնին: «Շատ հաջող ընթացավ փառատոնը, ասաց նա, չէի սպասում այնքան հրաշք կատարումներ, ցավոք, չկա կոմպյուտերացված համակարգ, որպեսզի կարողանամ համեմատել ու բոլորի մասին կարծիք հայտնել, բայց ուզում եմ նշել, որ Նյու Յորք Վոյիսիզը, Տաթեւիկ Հովհաննիսյանը եւ Դավիթ Ազատյանն ամենից հետաքրքիրն էին: Հինգերորդ անգամ եմ գալիս Հայաստան եւ արդեն լավ ծանոթ եմ հայկական ջազին եւ ուրախ եմ, որ այն ծաղկում է Հայաստանի հետ մեկտեղ»:

Չիկո. «Հիացած եմ այս փառատոնից, ուղղակի տոն է, եւ կուզենայի, որ այն չավարտվեր, վերածվեր կոնկրետ ոեալ քայլերի, որպիսիսեւ ջազի վիճակը Հայաստանում բարձր է եւ արտասահմանում մեր կոլեգաները պարզապես առոված են հայ երաժիշտների կատարողական արվեստից, բայց ոչ մի բան չի արվում ջազի կրթական ասպարեզը զարգացնելու համար: Ինձ կարող են ասել, որ կոնսերվատորիայում կա բաժանմունք, ես շատ կվիճեմ: Թող չնեղանան իմ մոտ ընկերները (այնտեղ աշխատող), դա հիմնականում թղթի վրա է, ջազմենները չունեն ստուդիա եւ պատրաստելու հնարավորություն, վստահ կարող եմ ասել, պետական ոչ մի հովանավորություն չկա: Ինձ շատ դուր եկավ «Գոյ» թատրոն-լաբորատորիան, ասաց նա, Խորեն Աբրահամյանը, որն այն ժամանակ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահն էր ու Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավարը, մեզ առաստաղ տվեց իր տնօրինած թատրոնի 4-րդ հարկում: Անբարեկարգ ամայի տարածությունը մեր ուժերով վերածեցինք թատերասրահի եւ սկսեցինք ներ կայացումներ տալ: Քանի որ այդ տարածքը մեզ հանձնվել էր առանց որեւէ պայմանագրի, ուստի ամեն պահ կարող է թատերասրահը ազատելու հայց ներկայացվել: Սուդ կացության մեջ չընկնելու համար ինքներս մեր



միջոցներով ստիպված էինք լավ արդյունք: Նախկինում ջազի մատուցման ձեւի (մեկը մյուսին փոխարինել), խոսքս գործիքների մասին է: Այդ ձեւը առանձին հավաքներում ընդունելի է, բայց բեմի վրա դա ես չեմ ընդունում, կարծում եմ, որ մեկ առ մեկ պետք է նորոգվի կատարումից առաջ: Իսկ նմանատիպ փառատոնը մեծ դաս է, ջազի կոնսերվատորիա, որը դասաիարակչական մեծ դեր կարող է խաղալ: Իսկ ի՞նչ ջազը, ասեմ, կիսրոնի եւ նարինջի պատվաստումից ծնվեց գրեյֆրութը Ամերիկայում, ջազն էլ ստեղծվեց սինթեզից»:

Արա Դենկյանի 40 տարվա երազանքը վերջապես կատարվեց, եկավ Հայաստան, նվագեց հայ բեմում եւ ուրախությունն ու հիացմունքը հայտնեց փառատոնի կազմակերպիչներին ավելացնելով, որ «այն հոգեւոր արժեքները, որ տվել է ինձ, ես այսօր կարողացա փոխհատուցել իմ հայ ժողովրդին»:

Ջորջ Ավագյանը ջազի ամենաթունդ սիրահարն ու երկրպագուն է, որ հատուկ ԱՄՆ-ից ժամանել է ներկա գտնվելու փառատոնին: «Շատ հաջող ընթացավ փառատոնը, ասաց նա, չէի սպասում այնքան հրաշք կատարումներ, ցավոք, չկա կոմպյուտերացված համակարգ, որպեսզի կարողանամ համեմատել ու բոլորի մասին կարծիք հայտնել, բայց ուզում եմ նշել, որ Նյու Յորք Վոյիսիզը, Տաթեւիկ Հովհաննիսյանը եւ Դավիթ Ազատյանն ամենից հետաքրքիրն էին: Հինգերորդ անգամ եմ գալիս Հայաստան եւ արդեն լավ ծանոթ եմ հայկական ջազին եւ ուրախ եմ, որ այն ծաղկում է Հայաստանի հետ մեկտեղ»:

Չիկո. «Հիացած եմ այս փառատոնից, ուղղակի տոն է, եւ կուզենայի, որ այն չավարտվեր, վերածվեր կոնկրետ ոեալ քայլերի, որպիսիսեւ ջազի վիճակը Հայաստանում բարձր է եւ արտասահմանում մեր կոլեգաները պարզապես առոված են հայ երաժիշտների կատարողական արվեստից, բայց ոչ մի բան չի արվում ջազի կրթական ասպարեզը զարգացնելու համար: Ինձ կարող են ասել, որ կոնսերվատորիայում կա բաժանմունք, ես շատ կվիճեմ: Թող չնեղանան իմ մոտ ընկերները (այնտեղ աշխատող), դա հիմնականում թղթի վրա է, ջազմենները չունեն ստուդիա եւ պատրաստելու հնարավորություն, վստահ կարող եմ ասել, պետական ոչ մի հովանավորություն չկա: Ինձ շատ

ԱՐԵՎԵՍՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՈՍՄԵՏԻԿԱ

Իվ Ռոշեն վերադառնում է

Ֆրանսիական կոսմետիկայի օրենսդիրներից մեկը՝ Իվ Ռոշեն, որի ֆիրման հայտնի է բուսական ծագում ունեցող իր արտադրատեսակներով, կրկին ստանձնել է ֆիրմայի ղեկավարությունը, ֆանի որ դժգոհ է դրա արդյունքներից: 68-ամյա Ռոշեն իր ընկերությունը հիմնել է 38 տարի առաջ Բրետանի փոքրիկ բնակավայրերից մեկում: Վերջին երեք տարիներին նա հեռացել էր ֆիրմայի ղեկավարությունից եւ այժմ դրա բաժնետոմսերի 60 տոկոսի տերը «Սանոֆի» ընկերությունն է, թեեւ Իվ Ռոշեն պահպանում է վճռական ձայնի իրավունքը:



Ժամանակին Իվ Ռոշեի ֆիրման հիմնվեց հետեւյալ պայմաններում: Իվ Ռոշեն, որի հայրը մահացել էր, երբ նա 14 տարեկան էր, հաճախ էր շրջում անտառներում: Բույսերը նրան ասես ուժ էին տալիս եւ վճռական դեր խաղացին նրա հետագա ճակատագրում: Այդ տարիներին մի պառավ հեքիմ Իվ Ռոշեին պատմեց թզուկներից իր պատրաստած բուժիչ խուրձի գաղտնիքը: Իվ Ռոշեն որոշեց խուրձը վաճառքի հանել, հայտարարություն տալով տեղական թերթում: Միանգամից 5000 պատվեր ստացվեց: Հետագայում բուսական ծագումը եւ փոստային առաքումները դարձան Իվ Ռոշեի կոսմետիկական արտադրանքի երկու գլխավոր հատկանիշներ: Ի դեպ, նրա արտադրանքի համբավը գերազանցում է նույնիսկ «Օրեալին»:

Իվ Ռոշեի կոսմետիկան շատ է գնահատվում մանավանդ մեր օրերում, երբ կրկին փորձ է արվում բնական հումքով արտադրատեսակներ ստեղծել: Բայց 1988 թվականին նա մի լուրջ սխալ գործեց, երբ իր բանկի՝ BNP-ի խորհրդով ձեռք բերեց գլխարկագործական մի ընկերություն: Իվ Ռոշեն շուտով նկատեց, որ հաշիվների մեջ իրեն խաբել են: Մշտապես ազնիվ գործարքների կողմնակից այդ մարդը խիստ վիրավորված էր: Նա ցույցի ելավ իր ֆիրմայի բոլոր աշխատակիցների հետ մեկտեղ: Այժմ 10 տարի անց, նա դեռ չի մոռացել իր հանդեպ գործված խարդախությունը, «Էքսպրես» հանդեսի թղթակցին խոստովանում է Իվ Ռոշեի մերձավորներից մեկը:

Երբեմն Իվ Ռոշեին հանդիմանում են այն բանի համար, որ նա ժամանակին չի փոփոխել շուկայագիտության եւ կառավարման ոլորտի հետ կապված իր գործելաոճը: Ներկայումս նրա գործունեությունը դժվարանում է այն պատճառով, որ 1992 թվականից ֆիրման գլխավորած որդին՝ Դիդիեն դժբախտ պատահարի զոհ է դարձել հրաձգության ընթացքում: Այսօր Իվ Ռոշեն ժամանակավոր կերպով վերստանձնում է իր ֆիրմայի ղեկավարությունը, որպեսզի աշխուժացնի դրա գործունեությունը, նորացնի անձնակազմը եւ օժանդակի իր մյուս երկու որդիների աշխատանքին առաջընթացին:

Գ. Բ.

Ամենակարող սեփականաշնորհման սպառնալիքի տակ

«Գոյակ» մշակույթի զարգացման գործարարական ընկերակցության «Գոյ» թատրոն-լաբորատորիան (գեղարվեստական ղեկավար Արմեն Մազմանյան) ստեղծվել է 1989 թվականին. մեր ժողովրդի ազգային բուռն զարթոնքի պահին. Ստեղծագործական խումբը, որի աշխատողների թիվը հասնում է չորս տասնյակի, պետական կառույցի մեջ չի գտնվում եւ ֆինանսավորվում է «Գոյակ» ընկերակցության կողմից. Թատրոնի շենքային հարմարության շուրջ զրուցեցինք թատրոնի տնօրեն Մկրտիչ Մկրտչյանի հետ.

Ինչպես գիտենք «Գոյ» թատրոն-լաբորատորիան, ասաց նա, Խորեն Աբրահամյանը, որն այն ժամանակ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահն էր ու Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավարը, մեզ առաստաղ տվեց իր տնօրինած թատրոնի 4-րդ հարկում: Անբարեկարգ ամայի տարածությունը մեր ուժերով վերածեցինք թատերասրահի եւ սկսեցինք ներ կայացումներ տալ: Քանի որ այդ տարածքը մեզ հանձնվել էր առանց որեւէ պայմանագրի, ուստի ամեն պահ կարող է թատերասրահը ազատելու հայց ներկայացվել: Սուդ կացության մեջ չընկնելու համար ինքներս մեր գլխի ճարը տեսանք եւ Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների երեւանի քաղաքխորհրդի գործկոմի 1996 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ վարձակալեցինք մայրուղաղաի Խորենացու փողոցի թիվ 18 շենքը, ուր «Սիեր Մկրտչյան արտիստական թատրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն էր: Որոշման երկրորդ կետում ասված է. «Թույլատրել «Սիեր Մկրտչյան արտիստական թատրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, հաստատագործունեություն ծավալելու նպատակով տարածքը ենթավարձակալական հիմունքներով, տասը տարի ժամկետով տրամադրել «Գոյ» թատրոն-լաբորատորիային»: Այդ համագործակցությամբ իրականացնում էր նաեւ հանգուցյալ Սիեր Մկրտչյանի երազանքը, որը կամենում էր ազատ թատրոն ստեղծել: Քաղաքի նոր իշխանությունը օրքանցելով երեքդ խորհրդի գործկոմի նախկին որոշումը, նոր որոշում է ընդունել, ըստ որի «Սիեր Մկրտչյան արտիստական թատրոնը» դարձել է փակ բաժնետիրական ընկերություն, որի տնօրեն է նշանակվել հանգուցյալի եղբայրը կինոբեմադրող Ալբերտ Մկրտչյանը: Ստեղծագործական խմբերի միավորումից հետո, այն շենքը, որում տեղավորված էր «Սիեր Մկրտչյան արտիստական թատրոնը» (գեղարվեստական ղեկավար Թամար Հովհաննիսյան) վերանվանվեց «Սիեր Մկրտչյան թատերասուն»: Մշակույթի այս օջախը փակ բաժնետիրական ընկերություն դառնալով ենթակա է սեփականաշնորհման: Սիա, թե ինչն է տագնապ հարուցողը: Դառնալով փակ բաժնետիրական ընկերություն, թատերասունը կարող է սեփականաշնորհվել եւ որեւէ առեւտրական կետի կամ խաղասան վերածվել»:

ՏԻՐՈՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Մեծ թվով հարցեր քննարկվեցին

Եկող տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Երևանում կանցկացվեն առաջին Համահայկական խաղերը:

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեն, որը կազմված է Հայաստանի եւ սփյուռքի ներկայացուցիչներից, անցկացրեց իր հերթական նիստը: Կոմիտեի անդամները ներկայացնում են վեց կառույց, որոնք կազմված են համահայկական մարզական շարժումներից: Նախատեսվում է, որ խաղերին կմասնակցեն Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, աշխարհի շատ երկրների ներկայացուցիչներ: Որոշվել է, որ մարզիկները հանդես կգան իրենց խաղերի թիմերի կազմերում, ինչը թեկուզ մոտավորապես, կհավասարեցնի մրցողների հնարավորությունները: Նշվեց, որ Համահայկական խաղերի ծրագրում ընդգրկվել են այնպիսի մարզաձեւեր, որոնք տարածված են, հաջողությամբ անցկացվում են ամենուր: Դրանք են ֆուտբոլը, բասկետբոլը (կանայք եւ տղամարդիկ), վոլեյբոլը (կանայք եւ տղամարդիկ), սեղանի թենիսը (կանայք եւ տղամարդիկ) անհատական եւ թիմային հաշվարկով, թենիսը (կանայք եւ տղամարդիկ) անհատական հաշվարկով, թեթեւ ատլետիկան (ութ մրցաձեւերից), շախմատ անհատական հաշվարկով, պրոֆեսիոնալ գործակիցներ չունեցողների մասնակցությամբ: Նախատեսվում է, որ հետագայում խաղերի ծրագիրը կընդլայնվի, եւ նրանում տեղ կգտնեն նաեւ այլ մրցաձեւեր:

Համահայկական խաղերի նախաձեռնողները ու կազմակերպիչները արդարացիորեն համարում են, որ այստեղ էականը մարզական արդյունքները չեն, գրված տեղերը չեն: Կարեւորը Հայաստան-սփյուռք կապի ամրապնդումն է, աշխարհի տարբեր երկրների երիտասարդ հայերի սերտ մերձեցումը: Համահայկական խաղերի անցկացումը դուրս է գալիս զուտ մարզական շրջանակներից: Նախատեսվում է մշակութային, երիտասարդական հարուստ ծրագիր: Դա իսկական երիտասարդական փառատոն կլինի:

Համաշխարհային խաղերի կոմիտեի նիստի վերջում ՀՀ արտաքին գործերի նախագահությունում կայացած մամլո ասուլիսում առաջին նստաշրջանի նախագահ, դեսպան Լեոն Մելիք-Շահնազարյանն անաց, որ նիստի օրակարգում 33 հարց է եղել: Կարեւորագույնը նախագահի հաշվետվությունն էր վերջին մեկ տարվա կատարածի վերաբերյալ: Հաշվետվությունը լսելուց հետո եղել են առաջարկներ: Խիստ կարեւորվել է մարզաբազաների հարցը: Կոմիտեի անդամներն այցելել են այն մարզադաշտերն ու դահլիճները, որտեղ նախատեսվում են մրցումներ անցկացնել: Կոմիտեի գործկոմի անդամ Հրանտ Բարդակչյանը (Կանադա) նշեց, որ որոշ մարզաբազաներ բարվոք վիճակում են, մյուսները լուրջ վերանորոգման կարիք ունեն:

Ստեղծվել է նաեւ Համահայկական խաղերի խորհրդանիշը: Այն առյուծ է պատկերում եւ անվանվել է «Արմիկ» (Արմենիա բառի փաղաքշական ձեւն է): Սակայն կոմիտեի անդամները նշեցին, որ այս խորհրդանիշը դեռ վերջնական չէ:

Ինչպես ասաց պրն Մելիք-Շահնազարյանը, նախատեսվում է, որ խաղերին ներկա կլինեն նաեւ հայազգի մարզիկներ Յուրի Ցորկաեֆը, Ալեն Պողոսյանը, Անդրե Աղասին... Հավանաբար, պատվավոր հյուրերի թվում կլինեն ՄՕԿ-ի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի տնօրեն Ֆեդերիկո Մայորը: Ի դեպ, միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Սամարանչը ողջունել է Համահայկական խաղերի անցկացումը եւ խոստացել իր աջակցությունը:

ԲՈՆՇՔԱՍԱՐՏ

Մեկնեցին աշխարհի առաջնություն

Երեկ Արգենտինա մեկնեցին մեր երիտասարդ բոնցֆամարտիկները: Նոյեմբերի 6-16-ը հարավամերիկյան այս երկրի մայրաքաղաք Բուենոս Այրեսում կանցկացվի բոնցֆամարտի աշխարհի առաջնությունը:

Աշխարհի առաջնությանը կմասնակցեն նաեւ Հայաստանի վեց ներկայացուցիչներ. 54 կգ ֆաշային կարգում՝ Գագիկ Հունանյան (Էջմիածին), 57 կգ՝ Լյուդվիգ Պաղոյան (Վանաձոր), 63,5 կգ՝ Արտակ Մալումյան (Վանաձոր), 67 կգ՝ Ասատուր Թունյան (Երեւան), 91 կգ՝ Լեւոն Փայտյան (Երեւան), 91 կգ-ից բարձր՝ Բագրատ Օհանյան (Գյումրի): Մեր թիմի ավագ մարզիչն է Դերենիկ Ոսկանյանը:

Հանրապետության բոնցֆամարտիկները լրջորեն են նախապատրաստվել այդ պատասխանատու մրցումներին: Թիմը կարճատեւ ուսումնամարզական հավաք է անցկացրել, իսկ նախապատրաստական վերջին փուլը կընթանա Արգենտինայում:

Աշխարհի առաջնության մեկնելուց առաջ մարզական պատվիրակությանն ընդունեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանը: Նա հաջողություն ցանկացավ երիտասարդ բոնցֆամարտիկներին, միաժամանակ հույս հայտնեց, որ նրանք իրենց ելույթներով կարարունակեն հայկական բոնցֆամարտի լավագույն ավանդույթները:

Բոնցֆամարտիկներն ու նրանց մարզիչը հավաստիացրին, որ բոլոր ջանքերը կգործադրեն Բուենոս Այրեսի ռինգում հաջողության հասնելու համար:

Աշխարհի առաջնություն է մեկնում նաեւ բոնցֆամարտի ճանաչված մասնագետ, միջազգային կարգի մրցավար Դերենիկ Գաբրիելյանը: Նա Արգենտինա է հրավիրվել սպասարկելու առաջնության մենամարտերը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Որոշեցին չեմպիոնուհիներին

Հավաքական թիմերի հանրապետական կենտրոնի դահլիճում անցկացվեց գեղարվեստական մարմնամարզության առանձին վարժությունների Հայաստանի առաջնությունը, որին մասնակցեցին մի քանի տասնյակ մարզուհիներ:

Տարբեր խմբերում անցկացված մրցումներում զգալի էր մայրաքաղաքի Արաքիր եւ Կենտրոն համայնքների ներկայացուցիչների առավելությունը:

Հետաքրքիր ավարտվեց առաջին կարգային մարզուհիների՝ գնդակով վարժության մրցադայարը: Երեք հոգի՝ Տաթեւիկ Եղիազարյանը, Արշալույս Մարգարյանը (երկուսն էլ՝ Արաքիրի համայնք) եւ Արփինե Պողոսյանը (Կենտրոն) վաստակեցին 9,1 միավոր եւ երեքով կանգնեցին պատվո պատվանդանի առաջին աստիճանին: Մարգարյանը եւ Եղիազարյանը եւս մեկական հաղթանակ տարան, համապատասխանաբար ծաղավենով եւ ցատկաղարանով վարժություններում: Օղակով վարժությունում առաջին տեղը գրավեց Անի Գալոյանը (Արաքիր):

Հավաքական թիմերի հանրապետական կենտրոնի դահլիճում անցկացվեց գեղարվեստական մարմնամարզության առանձին վարժությունների Հայաստանի առաջնությունը, որին մասնակցեցին մի քանի տասնյակ մարզուհիներ:

Տարբեր խմբերում անցկացված մրցումներում զգալի էր մայրաքաղաքի Արաքիր եւ Կենտրոն համայնքների ներկայացուցիչների առավելությունը:

Հետաքրքիր ավարտվեց առաջին կարգային մարզուհիների՝ գնդակով վարժության մրցադայարը: Երեք հոգի՝ Տաթեւիկ Եղիազարյանը, Արշալույս Մարգարյանը (երկուսն էլ՝ Արաքիրի համայնք) եւ Արփինե Պողոսյանը (Կենտրոն) վաստակեցին 9,1 միավոր եւ երեքով կանգնեցին պատվո պատվանդանի առաջին աստիճանին: Մարգարյանը եւ Եղիազարյանը եւս մեկական հաղթանակ տարան, համապատասխանաբար ծաղավենով եւ ցատկաղարանով վարժություններում: Օղակով վարժությունում առաջին տեղը գրավեց Անի Գալոյանը (Արաքիր):

Կրտսեր սպորտի վարպետների ծրագրով հանդես եկող մարմնամարզուհիների պայքարում երեք մրցաձեւերում հաղթող դարձավ Կենտրոն համայնքի ներկայացուցիչ Տատյանա Աբրահամյանը: Նա առաջինն էր օղակներով, գնդակով եւ ցատկաղարանով վարժություններում: Ժապավենով վարժություններում հաղթող ճանաչվեց Աբրահամյանի թիմակցուհի Քնարիկ Պետրոսյանը:

Ուժեղագույնների՝ սպորտի ծրագրով հանդես եկող մարմնամարզուհիների մրցավեճում եւս մասնակիցներից մեկը մեծ առավելություն ուներ մրցակցուհիների նկատմամբ: Օտար լեզուների ինստիտուտի ուսանողուհի, հավաքական թիմերի հանրապետական կենտրոնի ներկայացուցիչ Նինա Ալոյանը առաջինն էր օղակներով, ցատկաղարանով եւ գուրգերով վարժություններում: Ինչպես ծաղավենով կարժությունում հաղթեց ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողուհի Կարինե Խալաթարյանը (Կենտրոն):

Թենիսի խաղադաշտերում

Անդրե Աղասին չեխական մրցաշարի գավաթակիր

Չեխիայի Օստրավա քաղաքում ավարտվեց IPB բանկի անցկացրած թենիսի միջազգային մրցաշարը, որում բավականին լարված պայքարից հետո գավաթակիր դարձավ ամերիկահայ Անդրե Աղասին: Եզրափակիչում նրա մրցակիցն էր սլովակ թենիսիստ Յան Կրոլակը, որի անգիջում, դիպուկ եւ ճկուն խաղն, ի դեպ, ոչ միայն չէր զիջում Անդրե Աղասիի պրոֆեսիոնալիզմին, այլեւ նույնիսկ երբեմն գերազանցում էր: Ինչեւէ, Աղասին դժվարությամբ, բայց 6-2, 3-6, 6-3 հաշվով, այնուամենայնիվ, հաղթանակ տարավ եւ իրեն պարգեւատացավ ոչ միայն հախճապակե Մեծ գավաթը, այլեւ IPB բանկի սահմանած 137 հազար ԱՄՆ դոլարը:

Խաղից հետո գավաթակիրն իր գոհունակությունը հայտնեց մեկշաբաթյա մրցաշարից եւ խոստացավ, որ հաջորդ տարի կրկին կմասնակցի Օստրավայի մրցությանը: «Դնես» օրաթերթը, դեռեւս մեկ օր առաջ, նրա հաղթական առաջընթացը բնութագրել է «Աղասին հարյավ ի մեռելոց» դիպուկ վերնագրով, եւ համեմատելով ռուս հայտնի թենիսիստ Եվգենի Կաֆելնիկովի հետ, որը կազինոներում հազարավոր դոլարներ է օտայլում, ընդգծել էր Աղասու համեստ կենցաղը՝ հիշեցնելով, որ Օստրավայում եղած օրերին նա միայն իսալական ռեստորան է հաճախել եւ հյուրանոցում CNN նայել:

ՀԱՍՏԱՏ ԱՌԱՏՐՅԱՆ
Պրահա

Լիոնի գավաթի խաղարկությունը

Տղամարդկանց խոշոր մրցաշար տեղի ունեցավ Ֆրանսիայում: Աշխարհի ուժեղագույն շատ թենիսիստներ պայքարի մեջ մտան Լիոնի մեծ մրցանակի խաղարկությունում: Սակայն առաջատարներն անհաջողության մատնվեցին:

Աշխարհի թիվ մեկ թենիսիստ Փիթ Սամփրասը (ԱՄՆ) վնասվածքի պատճառով քառորդ եզրափակիչում խաղադաշտ չմտավ, եւ նրա մրցակցին երիտասարդ գերմանացի Թոմի Հաասին հաղթանակ շնորհվեց: Կիսաեզրափակիչ հանդիպման առաջին խաղափուլում Հաասը 6-2 հաշվով հաղթեց համաշխարհային դասակարգման ցուցակի երկրորդ խաղացող Սարսելո Ռիոսին (Չիլի), իսկ երբ երկրորդում առջեւում էր (1-0), Ռիոսը հրաժարվեց շարունակել մրցամարտը: Եվ կրկին պատճառը վնասվածքն էր:

Այսուհանդերձ, Ալեխ Կարեֆսան (Իսպանիա) համեմատաբար հեշտությամբ հաղթեց Ուեյն Ֆերեյրային (ՀԱՀ) 6-3, 6-2:

Վճռական խաղում եւս հաջողությունը իսպանացու կողմն էր: Կարեֆսան 2-6, 7-6, 6-1 հաշվով հաղթեց Հաասին եւ նվաճեց Լիոնի մրցաշարի գլխավոր մրցանակը:

Մերի Պիրսի կրկնակի հաղթանակը

«Կրեմլի գավաթի» խաղարկության կիսաեզրափակիչները ԱՄՆ-Իսպանիա հանդիպում էին հիշեցնում: Դրանցից մեկում հանդիպեցին Մոնիկա Սելեշը եւ Սանդրին Տեսյուն, մյուսում Վենուս Ուիլյամսը եւ Մերի Պիրսը: Այդ յուրատեսակ «մրցախաղն» ավարտվեց 1-1 հաշվով: Հաղթեցին եւ եզրափակիչ մտան ամերիկուհի Սելեշը (6-3, 7-6) եւ ֆրանսուհի Պիրսը (2-6, 6-2, 6-0):

Մերի Պիրս

Թենիսի վիճակագիրները վճռական խաղից առաջ հիշեցրին, որ Սելեշն ու Պիրսը մինչ այդ հանդիպել են 6 անգամ, եւ 5-ում հաղթանակ է տարել ամերիկուհին: Սակայն այս անգամ առավելությունը Պիրսի կողմն էր: Նա կարողացավ 7-6, 6-3 հաշվով պարտության մատնել իր ուժեղ մրցակցուհուն: Պիրսը նվաճեց ֆրանսիական «Կարյե» ֆիրմայի պատրաստած արծաթե գավաթը, ինչպես նաեւ արժանացավ 165 հազար դոլար պարգեւավճարին:

Ֆրանսուհին այդի ընկավ նաեւ զույգերի մրցաոյարում: Նատալյա Զվերեւա (Բելառուս)-Մերի Պիրս երկյակը հաղթող դարձավ զուգախաղերում եզրափակիչում առավելության հասնելով մեկ այլ ինստերնացիոնալ զույգի Լայզա Ռեյմոնդի (ԱՄՆ) եւ Ռենե Սթաֆֆի (Ավստրալիա) նկատմամբ:

Իհարկե, այստեղ պարգեւավճարն ավելի համեստ էր: Նշենք, որ «Կրեմլի գավաթի» ընդհանուր մրցանակային հիմնադրամը 1 մլն դոլար էր:

ՇԱԽՄԱՏ

Առջեւում Վիշվանաթան Անանդն է

Հոլանդական Թիլբուրգ քաղաքում մեկնարկել է շախմատային ավանդական մրցաշարը: Այն անցկացվում է արդեն 22-րդ անգամ եւ, ինչպես վերջին մի քանի տարիներին, այս անգամ էլ չափազանց ուժեղ կազմ ունի: Այստեղ հանդես չեն գալիս ուժեղագույններից Գարրի Կասպարովը, Անատոլի Կարպովը, Ալեխեյ Շիրովը: Այդուհանդերձ, ըստ ՖԻԴԵ-ի դասակարգման սանդղակի, մրցաշարը բավականին բարձր՝ 17-րդ կարգ ունի:

Հենց սկզբից մրցումների մասնակիցները բուռն պայքարի մեջ մտան: Սակայն անդրանիկ տուրում միայն մեկ պարտիա արդյունավետ ավարտ ունեցավ. Վիշվանաթան Անանդը (Հնդկաստան) հաղթեց Ժոել Լոթյեին (Ֆրանսիա): Մնացած հինգ պարտիաներում ոչ-ոքիներ գրանցվեցին:

Խաղաղությամբ բաժանվեցին Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան)-Պյոտր Սվիդլեր (Ռուսաստան), Վեսելին Թոփալով (Բուլղարիա)-Վադիմ Զվյագինցեւ (Ռուսաստան), Մայքլ Ադամս (Անգլիա)-Լյուկ վան Վելի (Հոլանդիա), Պետեր Լեկո (Հունգարիա)-Վիկտոր Կորչնոյ (Շվեդիա), Երուն Պիկես (Հոլանդիա)-Մեթյու Սադլեր (Անգլիա) զույգերը:

Հաջորդ տուրում երկրորդ հաղթանակը տոնեց Անանդը: Նա պարտության մատնեց մրցաշարում իր հիմնական մրցակցին՝ Կրամնիկին: Հնդիկ գրոսմայստերն ու նրա մարզիչը՝ վրացի հայտնի մասնագետ Էլիզբար Ուբիլավան, շատ լավ էին պատրաստվել այդ վճռական հանդիպմանը եւ, ինչպես շախմատիստներն են ասում, Կրամնիկին «բռնեցին» տնային վերլուծության շնորհիվ: Երկրորդ տուրում հաղթանակ տարան նաեւ Ադամսը՝ վեսերան Կորչնոյի, եւ Սվիդլերը՝ Պիկեսի նկատմամբ: Մնացած երեք պարտիաները ոչ-ոքի ավարտվեցին:

Երկու տուրից հետո մրցաշարի մասնակիցներն այսպիսի արդյունքներ ունեն. 1. Անանդ՝ 2 միավոր, 2-3. Սվիդլեր եւ Ադամս՝ 1,5-ական, 4-8. Թոփալով, Զվյագինցեւ, վան Վելի, Լեկո, Սադլեր՝ 1-ական, 9-12. Լոթյե, Կրամնիկ, Կորչնոյ, Պիկես՝ 0,5-ական միավոր:

«Երկաթե» Պոլգարի հաղթանակը

Հոլանդիայի մեկ այլ քաղաքում՝ Հոգովենում անցկացված փառատոնի գլխավոր մրցաշարում վստահորեն հաղթեց հունգարուհի Հուդիթ Պոլգարը: Շախմատիստուհիների մեջ ունենալով ամենաբարձր անհատական գործակիցը՝ նա վաղուց հանդես չի գալիս կանանց մրցումներում եւ գերադասում է ուժեղ սեռի ներկայացուցիչների ընկերակցությունը: Եվ շատ հաճախ հաղթում է տղամարդ-շախմատիստներին: Զուր չէ, որ երիտասարդ հունգարուհուն «երկաթե» Պոլգար են անվանում:

Եվ ահա այստեղ էլ, մրցելով ուժեղ շախմատիստների հետ, Հուդիթը փաստորեն ոչ մի հույս չթողեց նրանց: Մրցաշարի առաջին շրջանում նա պարտության մատնեց աշխարհի նախկին չեմպիոն Բորիս Սպասսկուն (Ֆրանսիա), Յան Թիմանին (Հոլանդիա) եւ Տալ Շակեդին (ԱՄՆ): Երկրորդում ոչ-ոքի խաղաց Սպասսկու եւ Թիմանի հետ, հաղթեց Շակեդին եւ 6 հնարավորից վաստակելով 5 միավոր, գրավեց առաջին տեղը: Ամբողջ 1,5 միավորով ետ մնաց Թիմանը, որը գրավեց երկրորդ տեղը: Սպասսկին երրորդ տեղում է (2,5 միավոր), իսկ աղյուսակը եզրափակեց Շակեդը (1 միավոր):

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՕՐՎԱ ԽԵՏՔԻՑ

ՇՐՋԱՆ

Չեչնիայում լարվածությունը հասնում է «բարձրակետին»

ՄՈՍԿՎԱ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չեչնիայում լարվածությունը հասնում է իր «բարձրակետին», չեն բացառված խոշորամասշտաբ մարտական ընդհարումները, այս կարծիքին է «Չեչնիայի մշակույթի կենտրոնի» գլխավոր տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Զաբրայիլ Գակաևը: Այդ մասին նա այսօր հայտարարեց ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցի հետ կայացած հարցազրույցի ժամանակ մեկնաբանելով մարդկանց առեւանգումների դեմ պայքարի վարչության ղեկավար Շաղիդ Բարգիշեւի Գրոզնիում իրականացված սպանությունից հետո հանրապետությունում ստեղծված կացությունը:

Խոսելով Չեչնիայում միմյանց դիմակայող ուժերի մասին, Զ. Գակաեւը նշել է, թե «Չեչնիայի առանձնահատկությունն այն է, որ այնտեղ խառնվել է ամեն ինչ. մի կտրվածքը կրոնական է, երկրորդը սոցիալական, երրորդը տոհմացեղային, եւ վերջապես, կա եւս մեկը՝ քրեականը: Ամեն ինչ խառնվել է եւ ստացվել է վառվող, սարսափելի խառնուրդ»:

Նրա կարծիքով, առանձնակի վտանգ է ներկայացնում վահաբականության շարժումը, որը լայն տարածում է գտել Չեչնիայում եւ Դաղստանում: Վահաբականները ազգություն չեն ճանաչում, մերժում են Հյուսիսային Կովկասի մահմեդականների համար ավանդական «ժողովրդական իսլամի» ձեւերն ու նորմերը, երկպառակություն, անհանդուրժելիություն եւ թշնամանք սերմանում հավատացյալների շրջանում, փորձում հակադրել սերունդներին՝ հայրերին ու որդիներին, խարխլել լեռնական ժողովուրդների կյանքի ու մշակույթի ավանդական հիմքերը:

«Վահաբականությունը դարձել է քաղաքական պայքարի գործիք, ազգային արմատականության, անջատականության, գաղափարախոսությունը: Նրա կողմնակիցները ֆինանսական հզոր աջակցություն են ստանում արտասահմանյան կենտրոններից, որոնք քայքայիչ աշխատանք են տանում Ռուսաստանի դեմ», ընդգծել է գիտնականը:

UMCOR

Առաջարկվում է աշխատանք

Զարգացման ծրագիր

ԱՄՔՈՐ ամերիկյան բարեգործական կազմակերպությունը սկսում է միկրովարկային ծրագիր Լեռնային Ղարաբաղում: Հայտարարվում է մրցույթ հետեւյալ թափուր տեղերի համար՝ ավագ վարկային գործակալ, վարկային գործակալներ, հաշվապահ:

Աշխատակազմի պարտականությունները

Ավագ վարկային գործակալի հիմնական պարտականություններն են՝ աջակցել գրասենյակի վարչական եւ ծրագրային կառավարմանը, մասնակցել ծրագրի ռազմավարության (վարկային քաղաքականություն, աշխատանքային գրաֆիկ, երաշխիք խմբերի կազմավորում, նախապատրաստական աշխատանքներ գյուղերում) զարգացմանը, աջակցել ծրագրային գործունեության վերաբերյալ ամսական զեկույցների պատրաստմանը, համագործակցել տեղական եւ օտարերկրյա կազմակերպությունների հետ: Վարկային գործակալների հիմնական պարտականություններն են՝ իրականացնել գյուղերում նախապատրաստական աշխատանքները վարկառուների հետ, գրանցել երաշխիք խմբերը, ստորագրել վարկային պայմանագրեր, գանձել վարկառուների կողմից կատարված մուծումները: Հաշվապահի հիմնական պարտականություններն են՝ իրականացնել ծրագրի ֆինանսական վարում, պատրաստել ամսական զեկույցներ, տրամադրել վարկերը բանկերի հետ համագործակցությամբ:

Պահանջները. Բարձրագույն կրթություն՝ տնտեսագիտություն, բիզնես կամ ֆինանսներ, հարակից մասնագիտությամբ, ինքնուրույն աշխատելու, կազմակերպչական, հաղորդակցման եւ բանակցելու ձիրք, աշխատակազմի եւ ծրագիր ղեկավարելու առնվազն 3 տարվա փորձ (ավագ վարկային գործակալի համար): Ցանկալի է ունենալ համակարգչի եւ անգլերեն լեզվի բավարար գիտելիքներ (ավագ վարկային գործակալի եւ հաշվապահի համար պարտադիր է): Քաջալերում ենք, որպեսզի մրցույթին մասնակցեն կանայք: Նախընտրություն կտրվի Լեռնային Ղարաբաղի բնակիչներին (հատկապես Մարտունու շրջանից):

Հարցազրույցները կանցկացվեն Ստեփանակերտում եւ Երեւանում:

Բոլոր հետաքրքրված անձանց, ովքեր բավարարում են վերոնշյալ պահանջները, խնդրում ենք ներկայացնել RESUME (ինքնակենսագրություն, որը կներկայացնի դիմորդի կրթությունը եւ աշխատանքային փորձը) եւ դիմումնամակ:

Հասցեն՝

Ստեփանակերտում — *«Փրկեք երեխաներին» գրասենյակ, Սասունցի Դավթի փող. 24, հեռ. 4-07-01*

Երեւանում՝ — *ԱՄՔՈՐ-ի գրասենյակ, Կարապետ Ուլնեցու 16, հեռ. 28-29-77, 24-81-41*

Գործերի ընդունման վերջին ժամկետը նոյեմբերի 4-ն է:

ՀԵՌՈՒՏԱՏԵՍՈՒԱԳՐԵՐ

27 հոկտեմբեր

ՀԱՅ

17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմ «Ոռոկան, Ֆոռկան եւ Արտոսը»
17.55 Հեռուստասերիալ «Դալլաս»
18.50 Լուսանցք
19.10 Հեռուստալոտո
20.00 Հայլուր
20.30 1 լուր
20.45 Տոնավաճառ. տնտեսական տեղեկատու
21.00 Ֆուտբոլ. Ֆուտբոլ
21.25 Հեռուստասերիալ «Խուզարկու Նեռ Բրիջես»
22.15 Գ/Ֆ «Սլանտիդայի ռազմիկները»
24.00 Հայլուր

ՆՈՐՔ

19.00 Լուրեր
19.10 Մուլտֆիլմ
19.25 Մեծ դասամիջոց
19.45 Միասին («Սիր»)
20.30 ԱՐՏ-13. Երգիր
21.00 Լուրեր
21.25 Աստղերը հուշում են
21.30 Հեռուստասերիալ «Ծովային ոստիկանություն» (3-ր մաս. Ակտրպիա)
22.15 Սիրեցիք զմիմեանս
22.20 Դովլաթներ (Գագիկ Դաշտայան)
23.00 Լուրեր
23.15 Թրիլերի ժամում. գեղֆիլմ «Սքնշաղ»

ՌՏՊ

19.05 Սամուլի սուրհանդակ
19.15 Հրաժարակ կամ մոտեցեք խոսափողին
19.30 Սուրհանդակ
19.45 «Մեղրամիսը Լաս Վեգասում»
21.30 Սուրհանդակ
22.00 Մամուլի սուրհանդակ
22.15 Հրաժարակ
22.25 Չղջիկ-մեծակաղ
22.45 Երեք խնձոր
23.10 Տակախտ
23.30 Սուրհանդակ
00.00 Մի անգամ
00.05 Գիշերային կինոսրահ. Ա. Չելենսանոն, Ա. Սորդին «Կենդանակերտի նշանի տակ» կատակերգությունում
02.10 Սուրհանդակ

ԳԼ

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 00.45 Նորություններ
10.15 Սերիալ «Դաժան հրեշակը»
11.30-15.45 Բիզնես TV
16.15 Սերիալ Սինդրաղի նոր արկածները»
16.45 Երջանիկ դիպված
17.30 Մինչեւ 16 տարեկան եւ ավելի
18.00 «Դաժան հրեշակը»
19.15 Գուսակիր մեղեդին
19.45 Պիկ ժամ
20.00 Ցնցա
20.45 Սերիալ «Դանակների վրա»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.45 Գ/Ֆ «Խայտաբղետների գործը»
01.05 Հոկեյի եվրալիգայի առաջնություն. «Սկոտիշ. Իգլզ» (Մեծ Բրիտանիա)-«Ակ Բարս» (Կազան)
02.00 Գ/Ֆ «Քնքուշ մաշկ»

ՊՐՏ

8.00 Բարի լույս/ Ռուսատան
10.15 Հերթապահ բաժանումներ
10.25 Բարի լույս, Ռուսատան
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Երաժշտություն, երաժշտություն...
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.30 Սերիալ «Կոմսուհի որ Սոնսորո»
15.35 Սերիալ «Գինաստիա-2. Բոլորի ընտանիքը»
16.20 Հեռուստասերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 «Զանգահարեք Կուզայինին»
17.30 Սերիալ «Առաջին համբույրները»
18.30 Աստղակ
19.05 Գ/Ֆ «Գլխի գինը»
20.30 Հերթապահ բաժանումներ
20.40 Վավերագրական էկրան. «Մի իրադարձության պատմություն»
21.30 Մանրամասներ
21.45 «Սնշլազը» ներկայացնում է
22.15 Կինոյի ժամ. Գ/Ֆ «Փրկարարը» (ԱՄՆ)
23.55 Հեռուստասերիալ «Հոգեբորոնը»
00.45 Հերթապահ բաժանումներ

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք

ՀՀ կրթության եւ գիտության նախարար

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ներկայացնում է

«Բարեփոխումները կրթության բնագավառում»

Հինգշաբթի, հոկտեմբերի 29-ին

ժամը 18:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի

փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Դասախոսությունը կընթանա հայերենով՝

համաժամանակյա անգլերեն թարգմանությամբ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝

27-16-58

ՍԵՅՍՄԻԿ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2000 թ. մայիսին Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) նախատեսում է վերականգնել սեյսմիկ ճարտարագիտության մագիստրոսի կոչում շնորհող ծրագիրը: Ցանկացողները նախ եւ առաջ պետք է դիմեն ՀԱՀ-ի անգլերենի արագացված ուսուցման ծրագիր՝ մինչեւ 1999 թ. մայիսի 7-ը: 1999 թ. մայիսի 10-ին դիմորդները ՀԱՀ-ում կհանձնեն անգլերեն լեզվի քննություն (Institutional TOEFL): Սեյսմիկ ճարտարագիտության ծրագիրը կվերականգնվի բավարար քանակով որակյալ դիմորդներ ունենալու դեպքում: Հակառակ դեպքում՝ դիմորդները կունենան երկրորդ մասնագիտության ընտրության հնարավորություն:

Սեյսմիկ ճարտարագիտության ծրագրի մասին տեղեկությունների համար զանգահարել Արտակ Համբարյանին՝ 271075 եւ 273358 հեռախոսահամարներով:

Ընդունելության հարցերով զանգահարել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ՝ հեռ. 271629:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան Կոմիտաս պողոտայում 5/5 հարկ, 18/55 քմ, եվրավերանորոգված, 500 լ ջրի բաք տանիքում, վերանորոգված տանիք, 12 քմ խոհանոց, ARISTON: Հեռ. 224754

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ ☎ 529353

հաճախակ.	մակս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 Կվտ	2.5 Կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 Կվտ	3.0 Կվտ	6.1 ժ	

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) • տեղեկագրքերով • մագնիսական սկավառակներով • INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)
«Ցիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արաքսյան 2 Գրանցման թիվ 65. Դպիր 69149. Պատվեր 934 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 26.10.1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@